Ազգ

AZG
armenian newspaper

Յուլիս 30
1992
Հինգշաբթի

երկօրեայ թերթ
Բ տարի, թիւ 65 (157)
գինը 2 ռ

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPIRI SU

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅ-ԱԶԳ.ՍՍՀ
Ա. ՄԱՍԵՆԻ ԱՆՎԱՆ

Ադրբեջանցիները ֆիլմ են ցուցադրում Սումգայիթի ջարդերի մասին

Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մոսկվայում Ադրբեջանի ներկայացուցչությունում առաջին անգամ կցուցադրվի ֆիլմ՝ նվիրված 1988 թ. Սումգայիթի հայերի դեմ կատարված ջարդերի մասին, որին միջազգային հանրությունը ծանոթ է «Սումգայիթի ջարդեր» անունով: Ֆիլմի ցուցադրությանը հրավիրված են մամուլի եւ հասարակական-քաղաքական շրջանակների ներկայացուցիչներ:

Դժվար չէ պատկերացնել, թե ադրբեջանցիները ինչպիսի հայելիների մեջ են ներկայացնելու Մոսկվայի թույլտվությամբ իրենց գործած հակահայ ոճիրները: ■

Հայկական ուժերը գործողություններ են սկսել Մարտակերտի ազատագրման ուղղությամբ

Հուլիսի 29-ի առավոտյան հայկական կազմավորումները Մարտակերտի շրջանում ազատագրել են եւս մի գյուղ՝ Ներքին Հոռաթաղը: Այս մասին հայտնում է Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը: Նախօրեին հայկական կազմավորումների հսկողության տակ են անցել Մարտակերտի շրջանի եւս չորս գյուղեր: Համաձայն նույն գործակալության տվյալների, *«սկսվել են նախկինում գավթված Մարտակերտ շրջենտրոնի կրակակետերի ճնշման գործողությունները»*:

Դիտորդների կարծիքով, սա վկայում է, որ սկսվել է Մարտակերտի ազատագրմանն ուղղված հարձակումը: Ըստ նախնական տվյալների, վերջին երկու օրերի ընթացքում Մարտակերտի շրջանում գոհվել են ադրբեջանական բանակի առնվազն հարյուր զինվորներ: Հայկական կողմից, համաձայն Ստեփանակերտի տվյալների, գոհվել են չորս եւ վիրավորվել 15 հոգի:

Իր հերթին, Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտնում է, որ անցած օրվա ընթացքում Մարտակերտի շրջանում գոհվել են երկու եւ վիրավորվել յոթ ադրբեջանցիներ:

Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը հաղորդում է, որ ադրբեջանցիների գնդակոծությունների հետեւանքով Ղարաբաղի Մարտունու եւ Հադրութի շրջաններում գոհվել են առնվազն երեք եւ վիրավորվել երկու հոգի: Եւս մի հոգի գոհվել է Նախիջեւանի տարածից Արարատի շրջանի սահմանամերձ գյուղերի գնդակոծության հետեւանքով:

Մինչդեռ, Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը ասելիք չի խոստովանել, որ ադրբեջանցիները թողել են Մարտակերտի շրջանի մի շարք գյուղեր: Հաղորդվում է, որ *«Ադրբեջանի ինքնապաշտպանական ուժերը հետ են մղում հայկական զինված ուժերի հարձակումները»*: Ըստ Բաքվի տվյալների, այդ շրջանում մարտերի ընթացքում խփվել են T-72 տիպի հայկական երկու տանկ եւ հետեւակի մարտական մեքենա: Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտնում է նաեւ, որ գնդակոծությունների են ենթարկվել Ղարաբաղին սահմանակից Աղդամ, Ֆիզուլի շրջկենտրոնները եւ Շելլի գյուղը: Կան վիրավորներ: Բացի այդ, գնդակոծությունների են ենթարկվել նաեւ Ադրբեջանի եւ Նախիջեւանի սահմանամերձ շրջանները, որոնց հետեւանքով չորս ադրբեջանցի գոհվել են, ինը վիրավորվել: ■

Ադրբեջանի «մարդասիրական» ֆայլը. ինչո՞վ է այն դրդված

Բաքուն վերադարձրեց 20 գերյալ հայերի

Բաքու. Ինչպես հաղորդում է «Թուրան» գործակալությունը, հուլիսի 29-ի առավոտյան հունիսի կեսերին Մարտակերտի շրջանում գերի ընկած 20 հայեր հատուկ ավիառդերքով ուղարկվել են Հայաստան: Ադրբեջանական կողմը պատրաստակամություն է հայտնել այդ մարդկանց Հայաստանին հանձնել դեռեւս 10 օր առաջ, բայց, ինչպես պնդում են ադրբեջանական աղբյուրները, «Կարմիր խաչի» ներկայացուցիչները, որոնք այդ հարցում միջնորդի դեր են կատարում, այդ ամբողջ ժամանակ Երեւանի հետ բանակցություններ են վարել: Ինչպես հայտնել է Ադրբեջանի պաշտպանության նախարարության լրատվական-վերլուծական կենտրոնի տնօրեն Լեյլա Յունուսովան, ավելի վաղ Բաքուն հայկական կողմին առաջարկել է հայ գերիներին փոխանակել Լեռնային Ղարաբաղում գրավված ադրբեջանական գյուղերի բնակիչների հետ:

Միաժամանակ «Ազերինֆորմի» թղթակից Էլչին Սաղդարովը տեղեկացնում է, թե նշված ինքնաթիռը (որի մեջ, ի դեմ, ըստ նրա, գտնվում են ոչ թե 20, այլ 19 պատանդներ, որոնցից տասը՝ կին) Բաքվից թռել է ոչ թե Հայաստան, այլ Թբիլիսի: Լեյլա Յունուսովան մամուլի ասուլիսի ժամանակ հայտնել է, թե Ադրբեջանի ղեկավարությունը կատարել է այդ ֆայլը զուտ մարդասիրական նկատառումներով՝ թեեւ առ այսօր չեն ստացվել ոչ Խոջալուում զոհվածների դիակները, ոչ գերության մեջ գտնվող ադրբեջանցիները: Նա հույս է հայտնել նաեւ, որ այդ ֆայլը կօժանդակի հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորմանը:

Ինչպես երեւում է, Ադրբեջանի «մարդասիրությունն» իսկապես սահմաններ չի ճանաչում: Իսկ եթե ավելի լրջորեն մտածենք, աղա այս ֆայլը մի ավելորդ անգամ եւս ապացուցում է, որ Ղարաբաղում ադրբեջանցիների տված կորուստներն ու գերիները իսկապես այնքան մեծաքանակ են, որ նույնիսկ Ադրբեջանն է դիմում իր համար երբեմն անթույլատրելի ֆայլերի: ■

Ստամբուլի խորհրդաժողովին կմասնակցի նաեւ Հայաստանը

Հայաստանը մաս է կազմելու այն 14 երկրներին, որոնք առաջիկա հոկտեմբերի 13-14-ը խորհրդաժողով են գումարելու Ստամբուլում, որտեղ կքննարկվեն սեւծովյան եւ միջինասիական երկրներում առեւտրի եւ ներդրումների հնարավորությունները:

Հայաստանի կողմին այդ հանդիպմանը մասնակցելու են Ադրբեջանը, Բելառուսը, Վրաստանը, Բուլղարիան, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռումինիան, Ռուսաստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ուկրաինան, Ուզբեկստանը եւ Թուրքիան:

400 միլիոն բնակչություն ունեցող շրջանի ներկայացուցիչների միջեւ կայանալիք խորհրդաժողովի օրակարգում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են շրջանում տնտեսական ռիսկերի եւ պոտենցիալների, Թուրքիայի ռազմավարական դիրքի, շրջանում նավթի եւ ծառայությունների, գյուղական արդյունաբերության, շինարարության, կոնվենցիայի, զբոսաշրջիկության եւ տեխնիկական արդյունաբերության եռանկյունային առեւտրի, Միջին Արեւելքի հետ կապերի զարգացման հեռանկարների եւ ծրագրերի ֆինանսավորման հետ կապված հարցեր:

Սպասվում է, որ Հայաստանից խորհրդաժողովին կմասնակցեն մի նախարար, կարեւոր մի ձեռնարկության տնօրեն եւ մի բարգմանիչ: ■

Սերբական տանկերը ներխուժում են Բոսնիա

Հարավսլավական բանակին պատկանող մեծաթիվ հրասայլեր երեկ Սերբիայից ներխուժեցին Բոսնիա եւ առաջացան մինչեւ հյուսիսային շրջանները, որտեղ սերբական ուժերը Բոսնիայի իսլամների պաշտպանն մեջ տակ էին տվել: Լոնդոնում երեկ շարունակվեց Լորդ Քարինգտոնի ներկայությամբ բոսնիացի սերբ ու իսլամ ներկայացուցիչների ժողովը, առանց որեւէ դրական արդյունքի: ■

Երկրաշարժ Կասպից ծովո՞ւմ

Աստրոնոմն իջել է 52 սանտիմետրով

Համաձայն «Ազերինֆորմ»-ի առաջարկ հաղորդագրության, հուլիսի 27-ին, տեղական ժամանակով ժ. 12.15-ին Ադրբեջանի արեւելյում տեղի է ունեցել երկրաշարժ Ռիխտերի սանդղակով 4.5 բալ ուժգնությամբ: Ադրբեջանի սեյսմիկ ծառայությունները հաղորդում էին, թե երկրաշարժի կենտրոնը գտնվել է ծովում, Սումգայիթ քաղաքից 20 կմ հեռավորության վրա: Զոհեր եւ ավերածություններ չկան: Միաժամանակ Ադրբեջանի սեյսմիկ ծառայությունները զգացել են Աստրոնոմյան բերակղզու մակարդակի իջեցում 52 սմ-ով:

Ադրբեջանի կառավարությունը, հանրապետության նախագահը խնդրում են աղետի գոտու բնակչությանը խուճապի չմատնվել, ինքնակամ գործողությունների չդիմել: Բնակչության օգնության եւ էվակուացիայի համար ստեղծվել է տարբերային աղետների դեմ պայքարի շտաբ: Ահազանգով ոտի են հանվել հանրապետության քաղաքացիական պաշտպանությունը եւ Ադրբեջանի ազգային բանակը: Բնակչությանը խնդրվում է հանգստություն պահպանել եւ սպասել տեղական իշխանությունների հրահանգներին:

Հաղորդագրության մեջ նշվում են նաեւ այն հեռախոսահամարները, որտեղից խուճապահար բնակչությունը կարող է լրացուցիչ տեղեկություններ ստանալ. 39-3886 եւ 39-5540:

Ստանալով այս լուրը մենք փորձեցինք Հայաստանի սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունից ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ: Ծառայության լրատվական կենտրոնից հայտնեցին, որ մեր տարածքումները նման երկրաշարժ չեն արձանագրել, թեեւ հնարավոր է, որ դրա պատճառը երկրաշարժի ստորջրյա բնույթն է: Տեղեկացանք նաեւ, որ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության ղեկավարությունը դիմել է Մոսկվայի համապատասխան ծառայություններին Կասպից ծովի մակարդակի մասին ստույգ տեղեկություններ ստանալու նպատակով, բայց այդպես էլ որեւէ ոչինչ չի ստացել: ■

Վատիկան-Իսրայել դիվանագիտական հարաբերություններ

Վատիկանի եւ Իսրայելի ներկայացուցիչները երեկ հանդիպեցին Հռոմում, դիվանագիտական բնականոն հարաբերություններ հաստատելու իրար միջեւ: Կաթոլիկ եկեղեցու կենտրոնը ցարդ չէր ճանաչել Իսրայելի պետությունը, հակառակ տարբեր բնույթի հարաբերություններ ունենալուն: Վատիկանը միշտ էլ պահանջել է Երուսաղեմը վերածել միջազգային բաց քաղաքի, Հիսուսյան, իսլամ եւ հուդայական կրոնների համար հավասարապես կրոնական ազատություններով եւ ոստացիոն ղեկավարությամբ: ■

Սեփականաշնորհման օրենքը վերջապես ընդունվեց

ՀՀ Գերագույն խորհրդի չորրորդ նստաշրջանի ավարտից հետո, հրավիրված արտահերթ նիստի հինգերորդ օրը վերջապես 141 կողմ ձայնով (9 դեմ, 5 ձեռնպահ) ընդունվեց *«Պետական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման եւ աղատականացման մասին»* օրենքը:

Հողի սեփականաշնորհումից հետո վերջապես կատարվեց դեռեւ մեկ էական հարաբերություններ տանող հաջորդ անհրաժեշտ քայլը:

Հետաքրքիր չէ՞ նշվեց այդ օրենքը՝ երկար ժամանակ այն կազմավորվում էր կառավարության կաբինետներում: Հարցի արագացմանը չէին օգնում անգամ Գերագույն խորհրդի՝ օրենքի ներկայացման ժամկետները արագացնելուն վերաբերող որոշումները, որին լրջորեն անհանգստացնում էր առանց օրենսդրական ակտի գործադիր տարբեր մարմինների կողմից սկսված ընդհատակյա սեփականաշնորհման գործընթացը:

Վերջնական քվեարկությունից առաջ ԳԽ-ի նախագահի առաջին տեղակալ Արա Սահակյանը, հաշվի առնելով օրենքի կարեւորությունը, խորհրդարանում ներկայացված կուսակցական խմբակցություններին եւ պատգամավորական խմբերին առաջարկեց վերջնական տեսքի բերված օրենքի նկատմամբ արտահայտել իրենց վերաբերմունքը: ՀՀԵ-ի, ԱԺՄ-ի եւ ՀՌԱԿ-ի անդամներից նույնը ունեցողները նշելով, որ օրենքը փաստորեն ուշացած է հաստատվում, կոչ արեցին կողմ քվեարկել: Միայն ՀՀԴ-ն հայտարարեց, որ իրենք դեռ վաղ են համարում պետական ունեցվածքի «փոշիացումը»: ■

Հոնեկերը վերադարձվում է Գերմանիա

Մոսկվան եւ Բոնը երեկ միաժամանակ հայտարարեցին, որ իրենց միջեւ համաձայնություն է գոյացել Արեւելյան Գերմանիայի նախկին ղեկավար Էրիկ Հոնեկերին վերադարձնելու մասին: Գերմանիան ամիսներ ի վեր պահանջում է նրա վերադարձը, Բեռլինի պատից փախչողների վրա կրակելու հրահանգ տված լինելու հանցանքով դատարանի առջեւ կանգնելու համար:

Երեկ երեկոյան, Մոսկվայի ժամանակով ժամը 7-ին, Հոնեկերը մեքենայով դուրս բերվեց չիլիական դեսպանատնից: ■

ՄԱԿ-ի ճնշիչները ձեռնունայն Բաղդադում

Երեքշաբթի օրը մուտք գործելով գյուղատնտեսության նախարարության շենքից ներս, ՄԱԿ-ի ճնշիչները 24-ժամյա ստուգումներից հետո ոչինչ չգտան փաստաթղթերում իրաքյան քիմիական եւ կենսաբանական զենքի մասին եւ երեկ ձեռնունայն դուրս եկան շենքից: Այս բանը մեծ ոգեւորություն պատճառեց իրաքցիներին, որոնք երեկ ցույցեր կազմակերպեցին Բաղդադի գլխավոր փողոցներում: Նրանց ոգեւորությունը հասավ գագաթնակետին, երբ մի պահ նրանց մոտեցավ մոտորանավակով Տիգրիսի վրա գտնվող նախագահը, որի դեմքը ինքնավստահություն էր արտահայտում: ■

digitised by A.R.A.R.@

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հաշուետու լինել ազգին

Մեր ներկայ համարի 4-րդ էջում հրապարակում ենք գայթակղալից մի դրուագ երուսաղէմի Հայոց պատրիարքութեան, աւելի ճշգրիտ՝ նախորդ պատրիարքի՝ Եղիշէ Արք. Տէրտէրեանի տնտեսական-ֆինանսական ամօթալի գործունէութեան մասին: Ձեռագրերի գողութիւնից մինչեւ ազգային կալուածների աղօրինի վաճառք, եկեղեցական բանկարժէք իրերի առուծախից մինչեւ նիւթական միջոցների յափշտակում, այդ գործունէութիւնը եղել է իրացումների եւ մսխումների մի ամբողջ շղթայ, որի վերջին (?) օղակը բացայայտուել է վերջերս, շվեյցարական դրամական մէջ:

Եւ այսօր, ոչ նորընտիր պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանը, ոչ Ս. Յակոբեանց միաբանութիւնը, ոչ մեր քաղաքական իշխանութիւնները եւ ոչ էլ հայ ժողովուրդը չեն կարող տէր դառնալ, ոչ իսկ պահանջել յափշտակուած գումարները, անհետ կորած կալուածները, ազգային միւս արժէքները: Բանկային անձեռնմխելիութեան պաշտպանութեան տակ դրանք կորցրել ենք արդէն:

Երուսաղէմում կատարուած այդ արարքները դժբախտաբար եզակի չեն: Ե՛ւ սփիւռքում, Ե՛ւ Հայաստանում ազգային մեր տարբեր հաստատութիւններում կատարուել եւ կատարւում են նման արարքներ: Արդիւնքում նոյնը կատարւում է նաեւ անտարբերութեան, անդատապարտանութեան եւ անհաշուետուութեան հետեւանքով: Բոլորի մտքում դեռեւս թարմ է 1980-ական թթ. սկզբին Վենետիկի Մխիթարեան միաբանութեան Ս. Ղազար կղզու կալուածների պարագան, երբ մեր եկեղեցական հայրերը, առեւտրա-ֆինանսական դաժան օրէնքներին անծանօթ, միամտութիւնն ունեցան գրաւի դնելու ազգապատկան մեր կալուածները՝ վանքի եկամուտներն աւելացնելու միտումով:

Նման արարքներ, նոպատակային միջոցների շեղումներ, անձնական կամ հատուածական բնոյթի իրացումներ կատարւում են նաեւ այսօր, Հայաստանում թէ սփիւռքի տարածքում եւ կամ դրանց միջեւ: Եւ դրանք կը շարունակուեն տակաւին այնքան, որքան կը շարունակուեն ազգային-եկեղեցական-միութենական եւ պետական հաստատութիւններում միանձնեայ որոշումներ կայացնելու ընթացքը, դրամական եւ այլ հաշիւների միանձնեայ տնօրինումը:

Կը շարունակուեն, եթէ գերագոյն պատասխանատուութիւն չսահմանուի մեր ազգային բոլոր հաստատութիւնների վրայ, պահանջելով հարկին համապատասխան պատիժներով:

Կը շարունակուեն, եթէ ազգային հարստութիւնների տնօրինողները հաշուետու չլինեն ազգի առաջ: ■

հարստութիւնների տնօրինողները հաշուետու չլինեն ազգի առաջ: ■

Արցախում վերջին երջանի լայնածավալ ռազմական գործողությունների ու Ադրբեջանի աննախադեպ հաջողությունների դասերը, ինչ խոսք, բազմաթիվ էին: Չի բացառվում, որ արցախյան դարձությունների իսկական դասերն այդպես էլ ծածկված մնան մեծ քաղաքականության անթափանց վարագույրով, բայց մի բան ակնհայտ է, որ այդ դասերի գոնե տեսանելի մասում ամենաէականը ադրբեջանական բանակի մարտական տեխնիկայի բացահայտ գերակշռությունն էր:

Ռուսաստանը հրաշալի գիտակցում է, որ թեև այսօր դաշտերազմի մեջ են ԼՂՀ-ն եւ Ադրբեջանը, եւ Հայաստանը փաստորեն չի մասնակցում դաշտերազմին, բայց ԼՂՀ-ն չի կարող առանց Հայաստանի ռազմական աջակցության երկար շարունակել դայքարը: Ուսի ակընհայտ է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի ռազմական հավասարակշռության ցանկացած խախտում այնքան էլ հարթ չի ընթանում: Ադրբեջանը, որտեղ միշտ էլ հակառուսական տրամադրությունները բավականին ուժեղ են եղել, եւ որի ներկայիս ղեկավար Էլչիբեյի վարած քաղաքականությունը ոչ մի կերպ ռուսամետ չես անվանի, մեծ հաջողությամբ իրականացնում է ռուսական զենքի հիմքի վրա սեփական բանակի ստեղծումը, իսկ Հայաստանը, որի բնակչության մեջ ռուսամետությունն արմատավորված է, եւ որի ղեկավարների վարած քաղաքականության մեջ ռուսական կողմնորոշումը միշտ էլ առաջնային է եղել, շարունակ հետ է մնում Ադրբեջանից:

Ակնհայտ է, որ եւ Հայաստանում, եւ Ռուսաստանում կան ուժեր, որոնք շահագրգռված չեն երկու դեպությունների սերտ համագործակցության մեջ: Պատահա՞կան էր արդյոք, որ Գյումրիի ողբերգական դեպքերը, որոնց ժամանակ զոհվեցին ռուսաստանյան հինգ զինծառայողներ, տեղի ունեցան հենց այն ժամանակ, երբ Ռուսաստանի կողմից Հայաստանին տրամադրվելիք զենքի հանձնումը նորմալ հունի մեջ էր ընկնում: Այդ իրադարձությունների հետեւանքով զենքի հանձնումն ամբողջ մեկ շաբաթով հետաձգվեց: Դրան հաջորդեց Բալահովից գյուղում ռուս սպայի սպանության դեպքը: Միտումն ակնհայտ է՝ ամեն կերպ խոչընդոտել հայ-ռուսական հնարավոր ռազմական համագործակցությանը: Նման «դատահական» միջադեպերն են, որ ջարդ են գցում Հայաստանի դաշտանության նախարարության՝ Ռուսաստանի ռազմական կառույցների եւ մասնավորապես Հայաստանում տեղաբաշխված 7-րդ բանակի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու բոլոր ծիգերը:

Զարմանալի է նաեւ այն, որ Ռուսաստանի զանգվածային լրատվության միջոցներն անմիջապես մեծ խանդավառությամբ արձագանքում են Հայաստանում տեղի ունեցած նման միջադեպերին եւ շտապում մենակնաբանել դրանք միակողմանիորեն՝ լռության մատնելով այն բազմաթիվ փաստերը, երբ ռուսաստանյան զինծառայողները վաճառում են Հայաստանին հասանելիք զենքը: Այսինքն՝ Ռուսաստանում նույնպես կան ուժեր, որոնք ձգտում են խոչընդոտել Հայաստանի դաշտանության նախարարության եւ Հայաստանում տեղաբաշխված 7-րդ բանակի հարաբերությունների նորմալացմանը: Անհայտ է միայն, թե իրականում ո՞ւմ են ծառայում այդ ուժերը:

Իսկ դրանց դեմ դայքարելու մի ձեւ կա միայն՝ դեմք է հնարավորին չափ ձեռնդահ մնալ ռուս զինծառայողների հետ շփվելուց եւ առավել եւս նրանց հետ ինչ-որ գործարքների մեջ մտնելուց, որն էլ Հայաստանի դաշտանության նախարարությանը հնարավորություն կտա ավելի արագ եւ արդյունավետ աշխատել:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ո՞ՒՄ ՁԵՌՔՆ Է ԿՐԱԿՈՒՄ ՌՈՒՍ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎՐԱ

(ինչպես դա տեղի ունեցավ Շահումյանի եւ Մարտակերտի գրավման նախօրեին) անմիջապես անդրադառնալու է Արցախի դաշտերազմական իրադրության վրա:

Կոլեկտիվ անվտանգության դայմանագիրը չստորագրած Ադրբեջանն առանց լուրջ բարդությունների կարողացավ ստանալ զենքի եւ զինամթերքի իր «մասնաբաժինը» եւ անմիջապես ուղղել այն Ղարաբաղի դեմ միանգամից երջորեն նախաձեռնությունն իր ձեռքը վերցնելով: Ավելին, Կասպիական նավատորմի հինգ ռազմանավերի վրա արդեն բարձրացվել է Ադրբեջանի դրոշը, եւ Ադրբեջանի դաշտանության նախարար Ղազիեւն էլ անթաքույց հպարտությամբ հայտարարում է, թե «Ռուսաստանի հետ հարաբերություններում եղած լարվածությունը թուլանում է»: Իհարկե, Ադրբեջանին արդեն անհրաժեշտ է այդ թուլացումը, որպեսզի իր հատանելիք զենքն արդեն ստացել է, իսկ Ղարաբաղում դաշտերազմը նորանոր ծավալներ է ընդունում, եւ զինամթերքն ու դահեստամասերը Ռուսաստանից բացի ոչ ոք չի կարող մատակարարել:

Իսկ ինչպե՞ս է վիճակը կոլեկտիվ անվտանգության դայմանագիրը ստորագրած Հայաստանում: Ռուսաստանի բազմաթիվ քաղաքական գործիչներ եւ բարձրաստիճան զինվորականներ չեն էլ փորձում թաքցնել, որ Հայաստանին հասանելիք զենքի հանձնումը ձգձգվում է, եւ Ռուսաստանն այդ հարցում շտապելու ցանկություն չունի: Թե ինչպես է դա անդրադառնում արցախյան դաշտերազմի վրա՝ ակնհայտ է, եւ զենքի հանձնման գործում մեկ օրվա հապաղումն անգամ հղի է լուրջ վտանգներով: Բայց միաժամանակ ակնհայտ է նաեւ, որ Ռուսաստանը վաղ թե ուշ ստիպված է լինելու Հայաստանին հանձնել դայմանագրով նախատեսված զենքն ու ռազմական տեխնիկան: Խոսքն այստեղ միայն ժամկետների մասին է:

Եւ հենց այստեղ է, որ ամեն ինչ այնքան էլ հարթ չի ընթանում: Ադրբեջանը, որտեղ միշտ էլ հակառուսական տրամադրությունները բավականին ուժեղ են եղել, եւ որի ներկայիս ղեկավար Էլչիբեյի վարած քաղաքականությունը ոչ մի կերպ ռուսամետ չես անվանի, մեծ հաջողությամբ իրականացնում է ռուսական զենքի հիմքի վրա սեփական բանակի ստեղծումը, իսկ Հայաստանը, որի բնակչության մեջ ռուսամետությունն արմատավորված է, եւ որի ղեկավարների վարած քաղաքականության մեջ ռուսական կողմնորոշումը միշտ էլ առաջնային է եղել, շարունակ հետ է մնում Ադրբեջանից:

Ակնհայտ է, որ եւ Հայաստանում, եւ Ռուսաստանում կան ուժեր, որոնք շահագրգռված չեն երկու դեպությունների սերտ համագործակցության մեջ: Պատահա՞կան էր արդյոք, որ Գյումրիի ողբերգական դեպքերը, որոնց ժամանակ զոհվեցին ռուսաստանյան հինգ զինծառայողներ, տեղի ունեցան հենց այն ժամանակ, երբ Ռուսաստանի կողմից Հայաստանին տրամադրվելիք զենքի հանձնումը նորմալ հունի մեջ էր ընկնում: Այդ իրադարձությունների հետեւանքով զենքի հանձնումն ամբողջ մեկ շաբաթով հետաձգվեց: Դրան հաջորդեց Բալահովից գյուղում ռուս սպայի սպանության դեպքը: Միտումն ակնհայտ է՝ ամեն կերպ խոչընդոտել հայ-ռուսական հնարավոր ռազմական համագործակցությանը: Նման «դատահական» միջադեպերն են, որ ջարդ են գցում Հայաստանի դաշտանության նախարարության՝ Ռուսաստանի ռազմական կառույցների եւ մասնավորապես Հայաստանում տեղաբաշխված 7-րդ բանակի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու բոլոր ծիգերը:

Զարմանալի է նաեւ այն, որ Ռուսաստանի զանգվածային լրատվության միջոցներն անմիջապես մեծ խանդավառությամբ արձագանքում են Հայաստանում տեղի ունեցած նման միջադեպերին եւ շտապում մենակնաբանել դրանք միակողմանիորեն՝ լռության մատնելով այն բազմաթիվ փաստերը, երբ ռուսաստանյան զինծառայողները վաճառում են Հայաստանին հասանելիք զենքը: Այսինքն՝ Ռուսաստանում նույնպես կան ուժեր, որոնք ձգտում են խոչընդոտել Հայաստանի դաշտանության նախարարության եւ Հայաստանում տեղաբաշխված 7-րդ բանակի հարաբերությունների նորմալացմանը: Անհայտ է միայն, թե իրականում ո՞ւմ են ծառայում այդ ուժերը:

Իսկ դրանց դեմ դայքարելու մի ձեւ կա միայն՝ դեմք է հնարավորին չափ ձեռնդահ մնալ ռուս զինծառայողների հետ շփվելուց եւ առավել եւս նրանց հետ ինչ-որ գործարքների մեջ մտնելուց, որն էլ Հայաստանի դաշտանության նախարարությանը հնարավորություն կտա ավելի արագ եւ արդյունավետ աշխատել:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Անդրանիկ Օլրուգը բողոքում է ռուս զինծառայողներին դատանդ վերցնելու կապակցությամբ

Անդրանիկ Օլրուգի ռազմական խորհուրդը Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարությանը բողոք է հայտնել հուլիսի սկզբներին այդ հանրապետությունների ռազմական կազմավորումների կողմից երբեմն զինծառայողների գերեվարելու դեպքերի դեմ: Անդրանիկ Օլրուգի ռազմական խորհուրդը հայտարարեց, որ կոնոնարկի բոլոր միջոցներն ռուսական բանակի զինծառայողների ազատման համար եւ բույլ չի տա իր զինվորներին որեւէ խաղաբուղթ օգտագործել հայ-ադրբեջանական հակամարտությունում:

Միաժամանակ Անդրանիկ Օլրուգի մամուլի ասուլիսում հաղորդեցին Երեւանում ռուսական բանակի մայոր Սերգեյ Զայցեւի զոհվելու մանրամասները: Նա ծառայության գնալիս կանգնեցվել է անհայտ խմբի կողմից եւ ծաղած ծեծկռտուքի ժամանակ գերակա հարվել: Նրա հետ եղած մայոր Ալեքսանդր Զինչենկոյին հարձակվողները տարել են քաղաքից դուրս, սակայն որոշ ժամանակ անց ազատ են արձակել, պահանջելով բողոքել Հայաստանը երկու օրվա ընթացքում:

Ինչպես հաղորդում է մամուլի կենտրոնը, Հայաստանի ղեկավարությունը հավաստիացրել է, որ հանցագործները կարճ ժամանակում կգտնվեն եւ կենթարկվեն:

■

Ֆրանս-հայ հարաբերություններում որոշ սառնություն

Ֆրանսիացի նախարարը դժում է նախօրոք տված խոսքը

Ֆրանսիայում գործող տարբեր հայկական կազմակերպություններ Հայաստանի եւ Արցախի հայության օգնության նպատակով դիմել էին Ֆրանսիական կառավարությանը, որպեսզի վերջինս աղահովի նյութական եւ բարոյական անհրաժեշտ զորակցություն: Սակայն վերջերս որոշ սառնություն է նկատվում այդ հարաբերություններում:

Դրանցից մեկը կազմված է «Ֆրանսահայ բժիշկների միության» UMAF-ի հուլիսի 16-19-ը Փարիզում կազմակերպված «Հայ բժշկական համաշխարհային Ե. համագումար»-ի հետ:

Համագումարին մասնակցում էին աշխարհի 23 երկրներից մոտ 500 բժիշկներ, որոնք երեք օրվա ընթացքում քննեցին նորաստեղծ «Հայկական միջազգային բժշկական կոմիտեի» AMIC-ի կատարելագործման եւ գործունեության, Հայաստանում կատարվելիք միգաբանական հիվանդությունների, անեսթեզիական, վերակենդանացման, ատամնաբուժական առաքելությունների, Կիրովականի դոլիկլինիկայի զարգացման եւ բժշկական ասպարեզում աշխատող հայրենակիցներին վերադատրաստման ու մասնագետներ փոխանակելու ընդհանուր հարցերը:

Համագումարի Փարիզի «Կազինո դը Պարի»ում կազմակերպված «գալա»-ին, որ հայ երաժշտությունն ու դարը ներկայացրին Փարիզի *Սիփան-Կոմիտաս* երգչախումբը եւ *Նավասարդ* դարախումբը, մասնակցել է ավելի քան 1500 մարդ, իսկ գիշերվա բարեգործական ճաշկերույթ-դարահանդեսին՝ 800 մարդ, որոնք խոշոր թվեր են փարիզահայ գաղութի համար:

Փարիզահայ նշանավոր բժիշկ Գեորգ Արգարյանի նախագահած UMAF կազմակերպությունը, ընդունված կարգի համաձայն, սրանից 3 ամիս առաջ դիմել էր Ֆրանսիայի առողջապահության նախարար պրն. Բեռնար Կուշներին, որպեսզի նա լինի այս համագումարի դասվո նախագահը:

Այդ խնդրանքը ընդհանրապես չի մերժվում, սակայն տվյալ դեպքում պրն. Բեռնար Կուշները ոչ միայն երեք ամիս ձգձգում է իր դասախոսությունը, այլեւ համագումարի բացումից 48 ժամ առաջ կտրուկ ու խիստ մերժում է այդ առաջարկը:

Այս կարգի երկրորդ դեպքը կազմված է Ֆրանսահայ նախկին ռազմիկների միության մի նախաձեռնության հետ: Ինչպես մենք արդեն հայտնել ենք, այս տարվա մայիսի 29-ին Ֆրանսահայ նախկին ռազմիկների միության նախագահ պրն. Անդրե Սեֆերյանը դիմել էր Ֆրանսիայի դաշտանության նախարար պրն. Պիեռ Ժոխսին, որպեսզի նախարարությունն ստանձնի Արցախում ծանր վիրավորված հայ ռազմիկների՝ Ֆրանսիական դեղական հիվանդանոցներում բուժման լրիվ ծախսերը: Դիմումից 10 օր հետո դաշտանության նախարարությունը դրական դասասխան էր տվել դրան: Սակայն վերջերս, ինչպես մեզ ուղարկած իր տեղեկություններում հայտնում է պրն. Անդրե Սեֆերյանը, *«իսկապես, որ Ֆրանսիական կողմը նախատես հավանություն տվել էր, այժմ փորձում է իր խոսքը փոխել հասկացնելով, թե «ժամանելու հարկ չկա, որովհետեւ հիմա Բոսնիա-Հերցեգովինան ավելի դաժան օրեր է առդրում»: «Սա մեզ ստիպում է դիմել խիստ միջոցների»*, ասում է պրն. Սեֆերյանը:

UMAF-ը եւ ռազմիկների միությունը այն կարծիքին են, թե *«նախարարներ Բեռնար Կուշների եւ Պիեռ Ժոխսի՝ հայերի հանդեպ ցուցաբերած այս արհամարհական կեցվածքը դարզապես հաստատումն է Ֆրանսիական կառավարության հետապնդած այն քաղաքականության, որը բացահայտորեն արդյունքն է վերջին երջանում Ֆրանս-թուրքական սերտ հարաբերությունների»:*

Պարոն Սեֆերյանը տեղեկացնում է նաեւ, թե *«իրենք կարծում են, որ այս անարդարության միջոցով նրանք ամրապնդում են կառավարությունում գրաված իրենց տեղերը»:*

Ֆրանսիայից ստացած այլ տեղեկությունների համաձայն, այսօր, հուլիսի 30-ին, Ֆրանսիայի դաշտանության նախարարությունում կկայանա մի վերջին հանդիպում, եւ դրական դասասխան չստանալու դեպքում սպասվում է բավական մեծ աղմուկ:

Այսդիսով, մի անգամ եւս ականատես ենք լինում «մաղամ»-ի հերթական դոչ խաղացնելուն:

Ր. Հ. Ա.

Այս խմորը շատ ջուր կտանի կամ կոմկուս-հեռուստատեսություն դատի եւս մեկ հետաձգում

Հուլիսի 28-ին, ինչպես եւ սպասվում էր, վերսկսվեց Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի եւ հեռուստաառաքիչների դատավարության դեմ դատավարությունը, ուր առաջինը երկրորդին մեղադրում էր «աղօրինի գործողությունների» մեջ:

Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի անունից ելույթ ունեցավ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Սերգեյ Բաղդասյանը: Վերջինս դատասխանելով դատավորի եւ դատախազի հարցերին, նախ հայտարարեց, թե այն դայմաններում, երբ հանրապետությունում սկսվել է դեմոկրատական գործընթացը, Սամվել Գեւորգյանը եթեր չի տրամադրում այն կուսակցությանը, որը օրինականորեն գրանցված է Հայաստանի արդարադատության նախարարության կողմից: Նա երեք դատահանջեց եւ ասաց, թե դրա համար դեմք է, որ Ս. Գեւորգյանը հաղթահարի իր հակակոմունիստական բարդույթը: Գեւորգյանն էլ հայտարարեց, թե ինքը ոչ մի հակակոմունիստական բարդույթ չունի եւ հավաստիացրեց, որ ոչ մի օրենք չկա, ըստ որի ինքը դարտավոր է հաստատական-քաղաքական կազմակերպություններին ձայն տալ: Ավելին, նա հայտարարեց, որ երբ կոմկուսի ներկայացրած հայցադիմումի վրա դրված կնիքի վրա կարդացել է «ԽՄԿԿ», այդ դատճառով է արգելել: Ս. Բաղդասյանն էլ բացատրեց, թե դա հին կնիք էր, հիմա նորն ունեն:

Մի խոսքով, հարց ու դատասխանի ընթացքը մոտենում էր իր ավարտին, երբ հանկարծ դատախազ դրն. Իսկուդարյանը իրեն հատուկ հուզական կեցվածքով հարցերի հեղեղ թափեց դատասխանող Ս. Գեւորգյանի գլխին: Վերջինս էլ, երեւի թե չդիմանալով նման հոգեբանական գրոհին, բացարկ հայտնեց դատախազին եւ հրաժարվեց դատասխանել նրա հարցերին, ասելով, թե *«ստեղծվում է ոչ անաչառ, լարված մթնոլորտ»:* Իր հերթին, դատախազ Իսկուդարյանը հայտարարեց, որ Սամվել Գեւորգյանի բացարկը լիովին անհիմն է եւ նպատակ ունի դատաքննության մեջ աղմատում մտցնել: Թվում էր, թե դատարանը այնուամենայնիվ չի բավարարի այդ բացարկը: Բայց բավարարեց: Այժմ, հուլիսի 31-ին կգա մի նոր դատախազ եւ ամեն ինչ կսկսվի նորից: Մինչեւ ե՞րբ կտեւի այս մարաթոնը, դժվար է գուշակել, բայց բոլոր նախադայմանները կան եւ դարդելու, որ այն կշարունակվի այնքան, մինչեւ Մոսկվայում ավարտվի ԽՄԿԿ-ի դատավարությունը: Այն ժամանակ էլ, ինչպես դատասխանողն է դատճառաբանում, դարզ կլինի՝ կոմկուսին երբեւ տա՞լ, թե ոչ:

Հ. Ա.

Անդրանիկ Օլրուգը բողոքում է ռուս զինծառայողներին դատանդ վերցնելու կապակցությամբ

Անդրանիկ Օլրուգի ռազմական խորհուրդը Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարությանը բողոք է հայտնել հուլիսի սկզբներին այդ հանրապետությունների ռազմական կազմավորումների կողմից երբեմն զինծառայողների գերեվարելու դեպքերի դեմ: Անդրանիկ Օլրուգի ռազմական խորհուրդը հայտարարեց, որ կոնոնարկի բոլոր միջոցներն ռուսական բանակի զինծառայողների ազատման համար եւ բույլ չի տա իր զինվորներին որեւէ խաղաբուղթ օգտագործել հայ-ադրբեջանական հակամարտությունում:

Միաժամանակ Անդրանիկ Օլրուգի մամուլի ասուլիսում հաղորդեցին Երեւանում ռուսական բանակի մայոր Սերգեյ Զայցեւի զոհվելու մանրամասները: Նա ծառայության գնալիս կանգնեցվել է անհայտ խմբի կողմից եւ ծաղած ծեծկռտուքի ժամանակ գերակա հարվել: Նրա հետ եղած մայոր Ալեքսանդր Զինչենկոյին հարձակվողները տարել են քաղաքից դուրս, սակայն որոշ ժամանակ անց ազատ են արձակել, պահանջելով բողոքել Հայաստանը երկու օրվա ընթացքում:

Ինչպես հաղորդում է մամուլի կենտրոնը, Հայաստանի ղեկավարությունը հավաստիացրել է, որ հանցագործները կարճ ժամանակում կգտնվեն եւ կենթարկվեն:

■

Հայ-ադրբեջանական սահմանի վրա նոր զոհեր

Արդեն երկրորդ օրն է, ինչ Նախիջեւանի Հանրապետության տարածքում գտնվող հրանոթներից, հրասայլերից ու գրահամբենաներից հրետակոծվում են Երասխ, Սեւակավան եւ Արմաշ հայկական գյուղերը: Հայաստանի դաշտանության նախարարության տվյալներով, զոհվել է մեկ խաղաղ բնակիչ, տասը վիրավորվել են: Վնասվել է մի քանի բնակելի տուն, Արմաշ ավանում ավերվել է միջնակարգ դոյրոցի շենքը:

Հայաստանի արեւելքում գտնվող Արծվաշեն գյուղն արդեն երեք օր գտնվում է լիակատար շրջափակման մեջ: Ադրբեջանցիները փակել են գյուղը հանրապետությանը կապող միակ ճանապարհը, որի հետեւանքով գյուղում արդեն սննդամթերքի դակաս է զգացվում: Ինչպես «Սնարք»-ի թղթակցին հաղորդել է Կրասնոսելսկի գործկոմի նախագահ Ջարեհ Սարգսյանը, ադրբեջանական կողմի հետ բանակցությունները դեռեւս արդյունք չեն տվել: Ինչեւէ, շրջանի ղեկավարությունն անում է ամեն ինչ դրությունը թեթեւացնելու համար: ■

Բաքվի սահմանադահ ջոկատի ունեցվածքը Ադրբեջանին

Ադրբեջանի դեսական սահմանների դաշտանության կոմիտեն իր իրավասության տակ է վերցրել Բաքվում տեղակայված սահմանադահ ջոկատի դահեստները: Կոմիտեի ղեկավարությունն այդ քայլը դատճառաբանել է զինվորական ունեցվածքի դաշտանությունն ուժեղացնելու անհրաժեշտությամբ:

Կոմիտեի ղեկավարության եւ Անդրկովկասյան սահմանադահ օկրուգի հրամանատարության միջեւ Բաքվում կայացած հանդիպման ժամանակ նշվեց, որ սահմանադահ ջոկատի սպաները եւ զինվորները չեն աղահովում ռազմական ունեցվածքի եւ տեխնիկայի դահդանությունը, խախտում են կանոնադրությունն ու կարգադահությունը: Նշվեց նաեւ դահեստների հսկողության ժամանակ ալկոհոլի հաճախակի օգտագործման դեպքերի մասին:

Ադրբեջանի սահմանների դաշտանության կոմիտեի որոշումը ուժի մեջ է մտել հուլիսի 26-ից: ■

Ղարաբաղում վերականգնվում են կապի միջոցները

Ստեփանակերտ, 29 հուլիսի, «Սնարք».- Գալիք շաբաթ կսկսի գործել Երեւան-Ստեփանակերտ փոստային երթուղին, դաստաստվում է գործարկման հանձնվել Շուշիի կապի հանգույցը, «Սնարք»-ի թղթակցին հաղորդեց Ստեփանակերտի քաղաքային կապի հանգույցի դետ էդուարդ Զաքիյանը: Նա հայտնեց նաեւ, որ վերջին երկու ամիսների ընթացքում Ստեփանակերտում վերականգնվել են քաղաքային հեռախոսային 3000 համարից ավելի քան 1500-ը, մոտ 4000 ռադիոկետ, սկսել է գործել հեռագրակայանը Հայաստանի եւ ԱՊՀ այլ հանրապետությունների հետ: ■

Հայերը Հռոմ կժամանեն ուշացումով

Երեւան, 29 հուլիս. «Սնարք».- Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դաստվիրակությունները կմասնակցեն ԵԱՀԽ-ի երկրների Հռոմի հանդիպմանը, «Սնարք»-ի թղթակցին հաղորդեց հայկական դաստվիրակության անդամ, Հայաստանի Գխ դաստգամավոր Սուրեն Զոլյանը: Նա հայտարարեց, որ ԼՂՀ-ի հարցով Մինսկի խորհրդաժողովի նախագահը հավաստիացրել է, թե *«կկատարվեն բոլոր դահանջները կատված Ադրբեջանի կողմից ԼՂՀ-ի վրա կատարված ագրեսիան ճնշելու հետ»:*

Հռոմի հանդիպմանը Լեռնային Ղարաբաղից կմասնակցեն ԼՂՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Բորիս Առուշանյանը եւ ԼՂՀ Գերագույն խորհրդի դաստգամավոր Հրանտ Խաչատրյանը:

Սուրեն Զոլյանը հայտնեց, որ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դաստվիրակությունները արդեն երեկ դեմք է մեկնած լինեին Հռոմ, սակայն Մոսկվա թռիչքների փոփոխության դատճառով մեկնումը հետաձգվել է մինչեւ այսօր: ■

digitised by A.R.A.R.@

Իրան, Արան, Ղարաբաղ, Ադրբեջան

Ըստ Ավեստայի, Ղարաբաղը մարդկության նախահայրենիքներից է

Շնայած Ղարաբաղին եւ Ադրբեջանին վերաբերող պատմական փաստերի լկտի խեղաթյուրումներին Ադրբեջանի «գիտնականների», առավել եւս «արեւելագետների» կողմից, մամուլը բազմիցս անդրադարձել է եւ այդ հարցը կարելի է դասել չարչրկված թեմաների շարքին, սակայն մեկ անգամ եւս ուզում ենք ձեր ուշադրությանը ներկայացնել Իրանի որոշ պատմաբանների եւ գիտնականների, ինչպես նաեւ արաստահմանցի իրանագետների տեսակետներն այդ հարցի կապակցությամբ:

Արիական ցեղերի տեղաշարժերի վերաբերյալ հնագույն աղբյուրը զրադաշական սուրբ գիրքը՝ Ավեստան է (մեր թվարկությունից առաջ 6-րդ դար): Այն բաղկացած է 5 մասից: Նրա երկրորդ մասի՝ Վանդիդայի (Վանդիդան աշխարհի արարչության մասին է) սկզբում ասվում է. «Ահուրոմազդան (ամենակարող աստվածը) Արիա Վիչ երկիրը ստեղծել էր աշխարհի ամենալավ բնակավայրում, սակայն Ահրիմանը (չար ոգին) նրա դեմ աղտամբեց եւ այնտեղ սառնամանիք տիրեց. որի պատճառով Ահուրոմազդան Արիա Վիչի համար ստեղծեց ընդհանուր առմամբ 16 նոր երկրներ եւ բնակավայրեր.

1. Արիա Վիչ կամ Իրան Վիչ, 2. Սողդ կամ Սողդիա (Sughga, Sogdiana), 3. Մարվ կամ Մարգիանա (Morou, Margiana), 4. Բալխ կամ Բախբար (Bakhdhi, Bakhtri), 5. Նիսա կամ Պարթեւաստան (Nisaya, Parthava), 6. Հարաբ (Haraiva), 7. Քաբուլ (Vaekereta), 8. Ուրուվա (Ourva, Ourganedj), 9. Հիրքանի կամ Գորգան (Vehrcana), 10. Հրքումենք կամ Հլմենդ (Haetument), 11. Ռեխջ (Haraivate, Arachosia), 12. Ռեյ կամ Ռագ (Ragha), 13. Վրեն կամ Գիլան (Varena), 14. Չեխեր կամ Չերդ (Chachra), 15. Հնդկական Փինջաբ (Harta Hindu), 16. Ռանգիա կամ Ռանհա (Rangha, Ranha)»:

Բացի Արիա Վիչի եւ Ռանհայի աշխարհագրական տեղից, մնացած բոլոր 14 երկրների տեղը քարտեզի վրա հստակ է եղել: Իսկ վերը նշված երկու երկրների վերաբերյալ երկար ժամանակ գիտնականների միջեւ տարաձայնություններ կային: Ըստ Ավեստայի տվյալների, Արիա Վիչն իր մեջ ընդգրկում է Կովկասը եւ Իրանի Ադրբեջանի հյուսիսային հատվածը, որն արեւելքից սահմանակից է եղել Կասպից ծովին, իսկ արեւմուտքից՝ Սեւ ծովին:

Ֆրանսիացի մեծ գիտնական եւ հանրաճանաչ իրանագետ Դարմեստետերի տեսակետները առավել ընկալելի դարձնելու նպատակով հարկ ենք համարում ներկայացնել, մեր կարծիքով, կարեւոր տեղեկություններ:

Վանդիդայում (գիրք արարչության) Ջամշիդը (Իրանի առասպելական ամենանշանավոր թագավորներից մեկը) Ահուրոմազդայի կողմից նշանակվում է Իրան Վիչի արքա: Այնուհետեւ Վանդիդայի երկրորդ գլխում կարդում ենք. «Ահուրոմազդան երջանդասված մի խումբ իզդաներով (իզդաը ոմանք բարգմանել են հրեշտակ, իսկ ոմանք էլ երկրորդ կարգի աստված) *հանդիպում է Ջամշիդին Դաիթի (Արաքս) գետի մոտ եւ ասում է նրան. «Շտապով ահավոր սառնամանիք է տիրելու Արիա Վիչում, եւ բոլոր մարդիկ ու կենդանիները կվերանան»:* Ջամշիդին հրամայում է *«անդրգետնյա շատ մեծ մի անձավ կառուցել եւ այնտեղ դասադարել մարդկանց, կենդանիներին եւ բույսերը, վերցնելով ջրի եւ սննդամթերքի անհրաժեշտ պաշար եւ կենդանիների բոլոր տեսակներից մեկական առողջ զույգ: Եւ ապա միանգամից շատ խիստ սառնամանիք սկսեց եւ սաստիկ տեղումներ եղան եւ կենդանի աշխարհը վերացավ»:* Ինքնին շատ հետաքրքրական է այն փաստը, որ այս առասպելը շատ նման է Հին կտակարանի Նոյի առասպելին: Ըստ իրանական առասպելի, կենդանի աշխարհը ոչնչացել է սառնամանիքից, իսկ ըստ Հին կտակարանի՝ ջրհեղեղով:

Ո՞րն է ըստ Դարմեստետերի՝ Ավեստայի առաջին բարգմանչի տեսակետը Իրան Վիչի ճշգրիտ աշխարհագրական տեղի վերաբերյալ: *«Արիանամ Վիջո (Arianem Vejo կամ Իրան Վիչ Iran Vej), այն է իրանական բնակավայր, որն ըստ Բոնդահեշի (սասանյանների ժամանակաշրջանում կազմված համառոտ Ավեստան, որը կոչվել է նաեւ Զենդ Ավեստա) Զրադաշտի ծննդավայրն է եւ Ջամշիդը իր աղարանը այդտեղ է կառուցել: Որոշ գիտնականներ Արիա Վիչի աշխարհագրական տեղը որոնում են Սիր-Դարյայի մերձակա վայրերում: Նրանք այդ կարծիքը հայտնելու համար նախ հիմք են ընդունում այն, որ Արիա Վիչից հետո անմիջապես նշված է Սողդիան, Մարվը եւ Բալխը, որոնք գտնվում են այդ շրջանում: Երկրորդ, որ սասանյանների ժամանակ Դաիթի գետը, այսինքն Արաքսը, նույնացրել են Սիր-Դարյայի հետ: Առաջին հիմնավորումը ուշադրության արժանի չէ: Իսկ երկրորդի նկատմամբ կան ավելի համոզիչ առաջարկներ, որ պետք է Արիա Վիչի ստույգ տեղը փնտրել Իրանի արեւմուտքում: Բոնդահեշի 29-րդ գրակի 12-րդ կետում ասվում է՝ Arian Vej pun kostaki Aturpatagan (Իրան Վիչը գտնվում է Ատրպատական, որը պարսկերեն հնչել է նաեւ Ազարաբադական, այնուհետեւ անցնելով արաբերենին, արաբերենում «գ» հնչյունի բացակայության պատճառով դարձել է Ազարբաջան եւ այնտեղից վերադարձել է պարսկերենի Ազարբաջան տեսքով) Ադրբեջանի հարեւանությամբ: Քանի որ Ադրբեջանը գտնվում է արեւելքից՝ Կասպից ծովի եւ արեւմուտքից Ռանգիա երկրի միջեւ, ուստի դա հենց Մարասանի եւ Ղարաբաղի տարածքն է: Այսպիսով, Արիա Վիչը պետք է տեղադրել Արաքս եւ Քուռ գետերի միջեւ»:*

Ընդհանրապես, Ղարաբաղը եւ Կովկասը միասին վերցրած անցյալում կոչվել է Arran, որը Արիան կամ Իրանի կրճատ ձեւն է: Եթե նայելու լինենք Կովկասի քարտեզին, կտեսնենք, որ Քուռ գետը սկիզբ առնելով Կովկասի հյուսիս-արեւմուտքից, անցնում է Թբիլիսիի մոտակայքով եւ ապա ոռոգելով Ղարաբաղը, թափվում է Կասպից ծովը: Այդ իսկ պատճառով այդ երջանը կոչվել է Քուռբաղ (Քուռը պարսկերենում նշանակում է նաեւ կուր, իսկ բաղը՝ պահլավերեն բաղ է եւ նշանակում է ցանկապատված մրգատու ծառերի այգի) եւ նշանակել է քաղաք, որը ոռոգվում է Քուռ գետով: Հետագայում թուրքերը Քուռ բառը ոչ ճիշտ բարգմանել են որպես «սեւ» եւ այդ երջանը կոչել են Ղարաբաղ: Ինչպես պարզվում է, հնագույն ժամանակներից ի վեր Արանը եւ բնականաբար նրա հարավային մասը Իրանի Ադրբեջանի նահանգը եղել է Իրան Վիչ կամ արիական ցեղերի բնակավայրը: Եւ ընդհանրապես այն տարածքը, որ այսօր կոչվում է Ադրբեջան եւ որի մեկ մասը պատկանում է Իրանին, մյուս մասը նրա հարեւանությամբ պատմականորեն միասնական է եղել եւ մինչեւ 19-րդ դարը հյուսիսային եւ հարավային մասերը միմյանցից երբեք անջատված չեն եղել:

Իրանի Ադրբեջանի տարածքում մարդիկ խոսել են պարսկերեն լեզվի ազերի բարբառով եւ այն հարատեւել է մինչեւ թուրք եւ եկվոր ցեղերի լեզվի տիրապետումը: Իրանի ժամանակակից խոշորագույն գիտնական եւ պատմաբան, ծնունդով ադրբեջանցի Ահմադ Քասրադին ազերի լեզվի մասին գրել է. *«Ազերի կամ Ադրբեջանի նահանգի լեզուն»* խորագրով մի աշխատություն, որ գտնվում են ոչ միայն իր ուսումնասիրությունների եւ հետազոտությունների արդյունքներն այդ բնագավառում, այլեւ 11-ից մինչեւ 16-րդ դարերում տասնյակ պատմագիրների եւ աշխարհագետների աշխատանքները, ինչպես՝ օրինակ, Իբն Հողալ, Մասուդի, Աբդոլ Քեբարի, Իբն Բաթութե եւ այլն: Այս գիրքը միջազգային գիտական շրջանակներում հաճարվում է ազերի լեզվի բնագավառում ամենահավաստի աղբյուրներից մեկը: Մինչ ազերի լեզվի վերացումը նրանով գրված բարձրարժեք գրական ստեղծագործությունների թվին են դասվում հայտնի բանաստեղծներ Ղաբրան Թաբրիզի եւ Հոմամ Թաբրիզի երկերը, ինչպես նաեւ Շեյխ Սաֆի Արդաբիլիի (Սեֆեւիների հարստության նախահայրը) ստեղծագործությունները:

Ղաբրան Թաբրիզին իր բանաստեղծությունների միջոցով բողոքի ձայն է բարձրացրել ընդդեմ թուրքերի: Նշված գրականության մեջ երբեմն հանդիպում ենք այնպիսի բառերի, որոնք կան Դարեհի (521-485 մ.թ. ա.) արձանագրություններում: Ադրբեջանի թուրքերեն տարբերակում առկա են ազերի լեզվից առանձին բառեր եւ հնչակական կառույցներ: Օրինակ, ա նախաձանցը ժխտական իմաստով, որն այժմ գոյություն ունի Ադրբեջանի թուրքերենում, ազերի բարբառից է փոխառնված: Չնայած այն հանգամանքին, որ ազերի բարբառը դադարեց ծառայել որպես հաղորդակցության միջոց, սակայն նրա անունը մնաց որպես այդ տարածքում բնակվողների անվանում: Մեծ գիտնական Ահմադ Քասրադին իր արժեքավոր լայնածավալ աշխատություններից մեկում *«Ադրբեջանի 18-ամյա պատմությունը»* գրքում Ազադիսան բաժնում Ադրբեջանի Հանրապետության անվան առնչությամբ գրել է. *«... այդ ժամանակ Ադրբեջանի անվան հետ կապված դժվարություններ էին առաջացել, քանի որ ռուսական կայսրության փլուզումից հետո Կովկասի թրախոսները Բաքվում եւ նրա շրջակայքում մի փոքրիկ հանրապետություն ստեղծելով, այն անվանեցին Ադրբեջան: Այդ երկրամասը գրավոր աղբյուրներում կոչվել է Արան, բայց վերջին շրջաններում ժողովուրդն այն չի օգտագործել եւ մյուս կողմից էլ այդ նորաստեղծ հանրապետության հիմնադրողները երազում էին եւ հույս ունեին, որ պիտի միանան Ադրբեջանին: Եւ հենց այդ պատճառով էլ ընտրել էին այդ անունը: Սակայն քանի որ ադրբեջանցիները բոլորովին մտադիր չէին հրաժարվել իրենց իրանցի լինելուց, խիստ վրդովված էին կովկասցիների այդ անվանակոչությունից: Բայց քանի որ արդեն փաստը կատարված էր, ոմանք գտնում էին, որ այս դեպքում ավելի լավ է, որ իրենք փոխեն նահանգի անունը եւ առաջարկեցին կոչել այն Ազադիսան...»:*

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

Զորս ընբոստների ակամա «հերոսությունը»

Դպրոցներում դասերն սկսվելու են սեպտեմբերի 1-ին

Դպրոցում այս տարի դասերն սկսվելու են սեպտեմբերի 1-ին: Ում համար սա նորություն չէ, թող այլեւս չկարդա: Իսկապես, ի՞նչ մի մեծ բան է. միշտ էլ հո այդպես է եղել: Գյո՞ւղ եք անում: Ո՞վ չգիտե, որ սեպտեմբերի 1-ը Գիտելիքի օր է, ուսումնական տարվա սկիզբը:

Ո՞վ սուրբ անտեղյակություն...

Սիրելի ընթերցող, այս տարի ՀՀ լուսավորության նախարարությունը քո եւ քո բազմատանջ երեխաների գլխին փորձանք էր բերելու (հետագայում այն երեւի կանվանվեր «գիտափորձ», արդեն որոշված էր ուսումնական տարին սկսել օգոստոսի 17-ին:

Գիտեմ, գիտեմ, հարգելի ընթերցող, դու քո երեխաներին, միեւնույն է, դպրոց չէիր տանի (ես էլ): Շոգ է, վնասակար եւ վտանգավոր: Հետո էլ, նախարարությունը ի՞նչ ասի-չասի, բոլորս լավ գիտենք, որ արձակուրդների երկու «ավելորդ» շաբաթը մեր հյուծված երեխաներին կենսականորեն անհրաժեշտ է հիշ թե շաս կոփվելու եւ գաղիք ցրաշունչ ձմեռը հանելու համար: Ասենք, ուսուցիչների մի զգալի մասն էլ չէր գա, մանավանդ որ նրանց արձակուրդային էին վճարել հին եղանակով՝ մինչեւ օգոստոսի 26-ը ներառյալ, եւ չէին էլ պատրաստվում հեսկանչման դիմաց վճարել (այսինքն՝ ինը օր նրանք աշխատելու էին արդեն վճարվածի հիշողությամբ):

Ինչեւէ, որոշումն արդեն կայացված էր, եւ երբ հարց ծագեց, թե բա «էս ո՞նց եղավ», «էս ո՞վ արեց», ի՞նչ անակնկալ էր, ինչո՞ւ մեզ (ասենք, ուսուցիչներին կամ Գերագույն խորհրդի կրթության հանձնաժողովի անդամներին) չհարցրին, ապա անհապաղ «պատասխանն» էլ գտնվեց՝ արդեն ուշ է, որոշում կա, էլ բան չի՛ լինի անել, ու հանկարծ եթե մի բան (հակառակ բան) ուզեք անել, կարող է ավելի վատ լինել (ասենք, դասերը կարող են սկսել օգոստոսի 1-ից, ի՞նչ է եղել որ):

Այնուամենայնիվ, այդ չարաբաստիկ հարցը ծագեց ԳԽ կրթության հանձնաժողովի անդամների գլխում, հատկապես ընորհիվ այն բանի, որ Երեւանի քաղաքային խորհրդի գործկոմի լուսավորության վարչության պետ Ռ. Փոլադյանը (իր կամքով հանձնաժողով ներկայանալով) գրեթե բոլորին համոզեց, որ դասերն այս տարի էլ, առանց ավելորդ բարդությունների, կարելի է սկսել ավանդական օրը՝ սեպտեմբերի 1-ին: Հանձնաժողով հրավիրեց նաեւ «մյուս կողմը»՝ լուսավորության նախարարը. վերջինս պրնդեց օգոստոսի 17-ին դասերն սկսելու մասին իրենց որոշման հիմնավորվածությունը, թեեւ առանձնապես համոզիչ հիմնավորում չբերեց: Ասենք, երբ տղերքս հեղինակն ասաց, թե ինքն իր երեխաներին օգոստոսի 17-ին դպրոց չի տանի, նախարարն իր հերթին ասաց՝ իսկ ես կտանեմ, ու դեռ մեր հարեւաններն էլ կտանեն:

Մի գաղտնիք բացեմ, սիրելի ընթերցող: Համոզելու կամ հիմնավորելու ի՞նչ մի հոգ պիտի ունենար մեծարգո պարոն նախարարը, մեր հանձնաժողովն այդ ե՞րբ է հակառակվել գործադիր մարմինների որոշումներին: Ո՞վ չգիտե (թող հիմա իմանա), որ հանձնաժողովի անդամների մեծ մասը (համենայն դեպս, ղեկավարությունը լրիվ կազմով) ընտրվեցել է հիացմունքով եւ խանդավառությամբ դիմավորել գործադիր մարմինների ցանկացած քայլ: Նրանցից ոմանք խղճալ մոռացել են, որ իրենց բուն գործը օրենքներ ընդունելն է (լեզվի, կրթության եւ այլն), այլ ոչ, ասենք, ընտանեկան կամ հիմնավորելու ի՞նչ մի հոգ պիտի ունենար մեծարգո պարոն նախարարը, մեր հանձնաժողովն այդ ե՞րբ է հակառակվել գործադիր մարմինների որոշումներին: Ո՞վ չգիտե (թող հիմա իմանա), որ հանձնաժողովի անդամների մեծ մասը (համենայն դեպս, ղեկավարությունը լրիվ կազմով) ընտրվեցել է հիացմունքով եւ խանդավառությամբ դիմավորել գործադիր մարմինների ցանկացած քայլ: Նրանցից ոմանք խղճալ մոռացել են, որ իրենց բուն գործը օրենքներ ընդունելն է (լեզվի, կրթության եւ այլն), այլ ոչ, ասենք, ընդունելության քննությունների նոր համակարգ հիմնելը եւ դրա չեղած բարեփոխությունները տեղի-անտեղի տարփողելը:

Եւ ահա... չեմ հավատա (ես էլ մինչեւ հիմա դժվարությամբ եմ հավատում), կատարվեց հրաշք՝ հանձնաժողովը ոչ միայն չվարանեց լուսավորության նախարարության որոշումը (իսկ դրան էր կոչ անում, օրինակ, Ուսուցիչների կատարելագործման եւ ատեստավորման հանրապետական ինստիտուտի նորընծա տնօրենը), այլեւ ուղղակի չհամաձայնեց, հակառակվեց: Հանձնաժողովում «բացահայտվեցին» չորս ընբոստներ, որոնց անունները երեւի կհետաքրքրի ընթերցողին. ահավասիկ՝ Հ. Աղազարյան, Ս. Ջավուկջյան, Ֆ. Ղազարյան, Վ. Մարգոյան: Այս ընբոստ քառյակն ի վերջո կարողացավ կոտրել նաեւ սեփական ղեկավարության դիմադրությունը, համաղասասխան որոշում կայացվեց, նույն օրն այն հասցվեց վարչապետին, որից էլ պիտի բոլորս ընորհակալ լինենք մեր երեխաներին դասուհասից ազատելու համար:

Ի՞նչ կարիք կար այս ամենը գրելու: Չէ՞ որ սխալը ուղղվեց, հնարավոր բարդություններ կանխվեցին: Այդպես է, եւ դա՛ է էականը: Կարելի էր, իսկապես, չգրել, եթե որոշ թերթերում չասվեր, թե հենց լուսավորության նախարարությունն է վերջին (սեպտեմբերի 1-ին սկսելու մասին) իմաստուն որոշման հեղինակը: Ոչինչ, դա էլ կարելի է կալ տալ, միայն թե գործը չտուժի, միայն գործադիր մարմինները, պատվախնդրությունից կուրացած եւ խլացած, սխալի վրա նորանոր սխալներ չբարդեն: Վերջապես, ինչպես չհայտնենք ընթերցողներին եւ ծնողներին, որ Գերագույն խորհրդի կրթության եւ գիտության, լեզվի եւ մշակույթի հարցերի մշտական հանձնաժողովը, իր գոյության ընթացքում երկու տարվա ընթացքում երբեւ որեւէ օգտակար գործ է արել, ապա դա հենց օգոստոսի 17-ին դասերն սկսելու մասին որոշման բեկանումը նշանաստղն է: Ցավալի եւ ամոթալի է, որ դրա համար քառյակը պիտի ընբոստանար եւ սովորական, գործարար աշխատանքը կատարեր իրոք որ «հերոսական ջանքերի» տեսքով: Այս հարցը, ի դեպ, երեւի համբերության բաժակի վերջին կաթիլը եղավ, եւ նույն քառյակը անվստահություն հայտնեց հանձնաժողովի նախագահին: Անվստահությունը չանցավ, նախագահն էլ հրաժարվեց իր հրաժարականի խոստում-սպառնալիքից, դեռ քառյակի որոշ անդամներ էլ կուսակցական հանդիմանության արժանացան:

Որպես ավարտ այս ծգծված պատմությանն ավելացնեմ, որ ԳԽ կրթության հանձնաժողովում ամեն ինչ անփոփոխ է: Քառյակն, այնուամենայնիվ, համարում է (գուցե միամտորեն), թե ինքը մի փոքր հաղթանակ է տարել, բայց ոչ թե ընդդեմ նախարարության կամ հանձնաժողովի ղեկավարության, այլ հանուն արդյունավետ աշխատանքի, խելամիտ եւ ազգօգուտ որոշումների:

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Պողոս վարդապետ Գոճանյանը՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր

Վիեննայի Մխիթարյան միաբանությունը հուլիսի 13-ին գումարած նիստում ընտրել է իր ընդհանրական աբբահորը՝ հանձին Հայր Պողոս վրդ. Գոճանյանի:

1938 թ.-ին Մուսա Լեռան Խդրբեկ գյուղում ծնված աբբահայրը 12 տարեկան հասակում Լիբանանի Այնճար գյուղից ուղարկվել է Վիեննա (Ավստրիա), որտեղ Մխիթարյանների վանքում ստացել է կրթություն եւ հոգեւորական կոչում: Այնուհետեւ որպես ուսուցիչ եւ տնտես աշխատել է Բեյրութի Մխիթարյան դպրոցում, եղել է վանական մեծավոր, իսկ 1979-89 թթ.-ին Վիեննայի պեսիամալսարանի հայագիտական ամբիոնում աշխատել է որպես գրաբար եւ աշխարհաբար լեզուների դասախոս: Ծառայել է նաեւ Լոս Անջելեսի Մխիթարյան դպրոցում, իսկ 1990 թ.-ին Բոստոնում որպես Ս. Խաչ հայ կաթոլիկ եկեղեցու հոգեւոր հովիվ: ■

digitised by A.R.A.R.@

Ժողովուրդն արժանի է իր ղեկավարությանը եւ իր ճակատագրին, իսկ ղեկավարությունը՝ իր ժողովրդին

Երբ Արեւելքի մեծ նվաճողներն արշավում էին Այսրկովկաս, գերադասում էին Ղարաբաղ չմտնել եւ հնարավորին չափ հեռու մնալ, որ իրենց հեղինակությունը չվնասվի: Երբ Շահ Աբասը ասպատակում էր Այսրկովկասը, էլի «չուզեց» Ղարաբաղ մտնել: Երբ Նադիր շահը աջուձախ սարսափ էր սփռում, որոշեց մի ձեւով առնել ղարաբաղցիների չեզոքությունը եւ եկավ-թագադրվեց Ղարաբաղի կաթողիկոս Աբրահամի ձեռքով: Երբ արաբները գրավում էին Այսրկովկասը, միակ պարսությունը Դիզակում կրեցին: Երբ թաթար-մոնղոլ-կարա-կոյունլու ոչն էր ամեն ինչ արմատախիլ անելով գալիս, երբ Ռուսաստանն էր իր թաթը դնում, երբ... Ղարաբաղը կար ու կա, առայժմ կա...

Իշխանություններ

Ինչպես բազմիցս ասվել եւ գրվել է, Հայաստանի իշխանությունները ազգային հարցերում հանդես են բերում անվճռականություն ու գիջողականություն: Տիրապետելով քաղաքական եւ տնտեսական բոլոր լծակներին Հայաստանում եւ վերջիններիս Արցախում, նրանց հաջողվում է իրականացնել իրենց մտադրությունները, մանավանդ, որ դրա ճանապարհին ոչ մի լուրջ արգելք չկար ոչ ընդդիմության, ոչ էլ ժողովրդի մեջ: Հենց դա էլ իշխանությունների «անկառավարելիության» պատճառն է: Ընդդիմությունը չունի այն անհրաժեշտ կազմակերպվածությունն ու տեսակարար կշիռը, որ կարողանա ռազմական-ռեւանշիստական փոփոխության հասնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ: Բացի այդ, իշխանությունները հիանալի գիտեն նրա «թույլ» կողմերը եւ ի վիճակի են վիժեցնել կազմակերպվելու ցանկացած փորձ, քանզի ընդդիմության ուժերի միջեւ տարաձայնությունները բավականին շատ են, ավելին կան հակամարտ ուժեր, որոնց կարելի է մեկին «գնելով» մյուսի դեմ լարել:

Ժողովրդի հարցում շատ ավելի հեշտ է, մանավանդ, որ ինչպես բազմիցս նշվել է, իշխանությունները պիրապետում են բազմաթիվ հնարքների եւ անսայթաք են գործում: Այդ մեթոդներից ամենակենսունները. քարոզչություն այն մասին, որ Ադրբեջանը ուժեղ է բոլոր առումներով, ունի հզոր բանակ, իսկ մենք չունենք, որ մեր բոլոր դրժվարությունների պատճառը պատերազմն է, միջազգային հասարակական կարծիքը... եւ այլն: Քարոզչությանը հետեւում են գործողությունները: Այսպես, կարելի է հատուկ էմիսարների միջոցով խուճապ առաջացնել տեղերում, սպանություններ կազմակերպել, դադարեցնել մատակարարումները, պայմանավորվել բենզին հետ եւ այլն: Սրանք հին ու փորձված հնարքներ են, փոխվում է միայն ժամանակն ու ձեւը: Իսկ աջակցություն կարելի է առաջացնել ամենուր, քանզի ամեն ինչ արվում է սեփական տարածքի եւ ժողովրդի հաշվին:

Ե՞լքը: Ելքը մեկն էր, բազում դարերի ընթացքում փորձված ու հաստատված տարածքը գրավվում է զենքով, ամրապնդվում պետականությունը, բնակեցվում: Ղարաբաղի հարցում շատ ավելի հեշտ էր. բնակեցված է հայերով, նեռից մաքրված եւ բավականին մարտունակ զինախմբերով: Այս դեպքում պատմական եւ իրավական առաջադրանքները կապ չունեն եւ ոչ ոքի համար հետաքրքիր չեն՝ հայրենիքն այդպես է ստեղծվում: Այդպես են ստեղծվել Միացյալ Նահանգները, Ռուսաստանը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Թուրքիան եւ այլն: Դա շարվեց, որովհետեւ Հայաստանի իշխանությունները կամ չէին ցանկանում, կամ էլ նրանց չէին թույլատրում, ինքը նրանց համար արդարանալու պատճառ չէ: Շահումյանում եւ Մարտակերտում մենք պարտություն չենք կրել, գրաված եւ անդարձ: Քանզի այնտեղ ոչ ոք չի գնա աղրելու՝ [illegible] տեղ ու միջոց չկա:

Ժողովուրդ

Իշխանություններն իրենց հաշվարկներում որոշակի հենարան ունեն ժողովրդի մեջ. հատկապես Լեռնային Մեծամասնության մոտ, որի կազմակերպման եւ ընդարձակման համար բավականին ջանքեր են գործադրվում:

Ազգային «զարթոնքի» սկզբին, բնականաբար, իշխանությունները եւ ընդդիմությունը ջանք ու եռանդ չէին խնայում ժողովրդին իրենց կողմը քաշելու: Քրքվեց պատմությունը, արխիվները, եւ կոմունիստական մամուլում եւ հանրահավաքներում հրապարակումներն ու ելույթները հեղեղվեցին հայ ժողովրդի հերոսական էության գովքով, վեր հանվեցին դեմքեր, դեղքեր, փաստեր: Սակայն այդ ընթացքում եւ մինչեւ հիմա չկատարվեց քաղաքական ոչ մի վերլուծություն, ժողովրդին չասվեց ճշմարտությունը, աշխարհընկալման հին մակարդակը չփոխվեց: Ավելին, ի հայտ եկան մարգարեներ, ըստ որոնց հայ ժողովուրդը ինչ-որ այլ, առանձնահատուկ երեւույթ է, որ չգիտես ինչ առաքելություն ունի, որ կախարդական բաներ կլինեն՝ կապված մեր աշխարհի հիմքում, կենսրոնում նախաստեղծ դերի հետ: Եւ ժողովուրդը գլուխը կորցրեց ու կրկին իր հույսը դրեց վերին ուժերի վրա: Պետականություն քարոզելու փոխարեն առաջին պլան մղվեցին հերոս-Ֆիդայիների պատմությունները, սակայն չասվեց, թե պատմական որոշակի փուլում եւ որոշակի մոտեցմամբ ինչ վնաս են նրանք հասցրել հայ ժողովրդին ու պետականությանը: Չասվեց, որ հենց այդ ժամանակ հայ շատ գործիչներ պայքարում էին Ֆիդայական շարժման դեմ՝ ձգտելով ստեղծել բանակ եւ կազմակերպված ազգային-ազատագրական պայքար մղել: Կանոնավոր բանակի անհրաժեշտության գիտակցումը առայժմ մթագնված է: Մարդիկ չեն հասկանում, որ վաս բանակն ավելի օգտակար է, քան տասնյակ լավ զինված ջոկատները (Ադրբեջանի վերջին հաջողությունները դրա ամենալավ ապացույցն են):

Անդուլ քարոզները տարածվեցին ամենուր՝ բոլոր բնագավառներում մենք լավագույնն էինք, առաջինը, անգերազանցելիորեն... Այն ասելն, որ դա վերածվեց խեղկատակության: Հայտնվեցին սուտ մարգարեներ եւ առաքյալներ, գրքացներ ու աղանդավորներ, ոչնչասակ արվեցին եղած արժեքները: Իսկ վերջին ժամանակներս հեռուստատեսությամբ ժամեր են հատկացվում այդ հողի վրա «խփնված» կիսախելագարների: Սա ազգային զարթոնք չէ, այլ, եթե ուզում եք, լրիվ հակառակը:

Իրականությո՞ւնը: Իրականությունը դառն է ու սարսափելի: Նախ, հայերը՝ աշխարհի առաջին նստակյաց ժողովուրդներից մեկը, այսօր, պատմական օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով, դարձել է ոչվոր կամ ձեռք բերել գնչուական հատկանիշներ: Աղացույց՝ 500 հազար դիմում արտասահման մեկնելու: 3,5 միլիոնից՝ 500 հազար: Գումարած Ռուսաստան եւ այլ հանրապետություններ մեկնողները, որոնց թիվն անվերահսկելի է:

Երկրորդ, որ վերոհիշյալի անմիջական պատճառներից է, գուցե ամենակարեւոր պատճառը՝ հայ ժողովուրդը չի սիրում իր հողը եւ իր հայրենիքը: Սա էլ իր հերթին բազմաթիվ պատճառներ ունի, որոնցից էլի ամենակարեւորը երեւի ժողովրդագրական տեղաշարժերն են. բացի Ղարաբաղից, Զանգեզուրից եւ մի քանի երջաններից, մարդիկ 100-200 տարի նույն տեղում չեն աղրել, արմատներ չեն գցել եւ իրենց կապված չեն զգում հողին: Այդ պատճառով էլ ժողովուրդն ընդհանուր առմամբ անտարբեր է տարածքային կորուստների հանդեպ: Հարցին մոտենանք «ստամոքսային» տեսակետից. այսօր Ադրբեջանը նվաճել է Հայաստանի լավագույն հողերը՝ Շահումյանն ու Մարտակերտը, որոնք հացով կարող էին աղահովել հայ ժողովրդին: Բայց հայերիս «փորը չի ցավում» այդ կորուստներից: Իսկ ադրբեջանցիները հող շատ են սիրում: Նրանց համար մի ընկուզենին ավելին է, քան մարդկային տասնյակ կորուստները: Եւ հողեր տալով մենք, ի թիվս այլ կախվածությունների, կընկնենք «գյուղատնտեսական» կախվածության մեջ:

Հայ ժողովուրդը պետք է գիտակցի, որ ինքը ուրիշներից ոչնչով ավելին չէ եւ պակաս էլ չէ: Եթե մի առավելություն ունի՝ համբերատարությունն է: Ցանկացած այլ ժողովրդի դեր այս վիճակում չի դիմանա: Սակայն խոսքը լյումդենական համբերատարության մասին չէ, որ հանդուրժում է նայրենիք զիջող իր ղեկավարությանը եւ մատը մատին չի խփում, ասենք, գոնե իր շենքի բակը մաքուր պահելու համար: Լյումդենացումը այնքիսի չափերի է հասել, որ իշխանությունները կարող են ազատ գործել, առանց «աչքակապության»: Միեւնույն է, մարդկանց պետքն էլ չէ:

Ճակատագիր

Կիսախելագար քարոզիչներն ու սուտ մարգարեները ժողովրդի մեջ արմատավորում են ճակատագրի ընկալման երկու տարբերակ: Առաջին, ամեն ինչ տիեզերական ուժերի միջամտությամբ լավ կլինի, եւ երկրորդ, ովքեր սրան չեն հավատում (արդեն իրենցից անկախ), որ հակառակը, ոչ մի հույս չկա: Առողջ մտածողությունը կղզյակների պես ցրված է այստեղ-այնտեղ, չի կազմակերպվում եւ որակ չի կազմում: Այսօրվա իշխանություններին դա ձեռնտու է, ձեռնտու է գուցե ընդդիմությանը, եւ վերջիններիս անսկզբունք դիրքորոշման եւ անգործության պատճառով ստեղծվում է իշխանությունների անփոխարինելիության պատրանքը:

Ճակատագրի էության ընկալումն էլ է երկփեղկված. ոմանք դա հասկանում են որպես կատարված փաստ, իրականություն, ոմանք էլ՝ ի վերուստ տրված ինչ-որ բան: Բացակայում է ճակատագրի ինքնուրույն կերտման գիտակցումը: Բացակայում է իրերի եւ երեւույթների բազմակողմ ընկալումը: Այսինքն, իրականությունը հուշում է, որ «չկա չարիք առանց բարիքի»: Որ եթե «վաս» բան կա, այն անպայման ունի իր «լավ» կողմը: Միակողմանիություն եւ անհատաղաշտություն՝ ահա ճակատագրի ընկալման հիմքը մեր մեջ:

Ժամանակն է, որ մենք մոռացության մատնենք բոլոր տեսակի մարգարեությունները եւ միմեանց դրանցից օգուտ չկա: Հարկավոր է իրապես լինել եւ ստեղծել (որիշների համար) մեր գոյության միջը, չտրվելով մեր անմահության սինդրոմին: Պատմության թատերաբեմից կարելի է հեռանալ՝ վիթխարի հետք թողնելով համաշխարհային քաղաքակրթության մեջ: Մենք այդ հետքը չենք թողել, չնայած մշակույթի շատ տեսաբաններ հակառակն են պնդում: Եւ կանհետանանք, առանց որեւէ դեր ու նշանակություն ունենալու: Իսկ անփառունակ վախճանը կարծես հեռու չէ:

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՅԱՆ

Ազգային սկանդալ. անհետացել է խոշոր գումար

Երուսաղեմի հայոց պատրիարքարանի Շվեյցարիայի հաշվի մեջ... 31 դոլլար

Երուսաղեմի հայոց պատրիարքությունը հրապարակել է Թեսեյալ հանդուրդագրությունը, որտեղ Թորգոմ պատրիարքը իր միաբանակից եղբայրներին տեղեկացնում է նախորդ պատրիարքի եղիշե արք. Տերտերյանի օրոք եւ նրա անունով Շվեյցարիայում բացված վանքապատկան հաշվի վիճակի մասին: Պարզվում է, որ ենթադրված 3-4 միլիոն դոլլարի փոխարեն այնտեղ մնացել է ընդամենը... 31 ամերիկյան դոլլար: Գումարները, ինչպես հայտնում է Թորգոմ սրբազանը, նախօրոք կանխիկ ձեւով բաշխված են եղել դրամատնից «մի անձի» կողմից, որին հանգուցյալ եղիշե պատրիարքը լիազորություն էր տվել գանձումներ կատարելու նույն հաշվից:

Հայաստանում ընթացող լայն հասարակությունը թերեւս դժվար լրիվ ըմբռնի հարցի էությունը, անցնող տասնամյակներին, ի հակադրություն սփյուռքի, հայրենական մամուլում այդ մասին ոչինչ լույս տեսած չլինելու պատճառով: Հետեւաբար, անհրաժեշտ ենք գտնում Թորգոմ պատրիարքի հաղորդագրությանը կցել մի քանի բացատրություններ:

ա. Երուսաղեմի Հայոց պատրիարքությունն ինքնավար եւ ինքնիշխան միաբանություն է. վավերացված տվյալ երկրի իշխանությունների կողմից: Պատրիարքության գլուխ գտնվում է պատրիարքը, որ վարչականորեն հաշվետու է միայն իր միաբանական ժողովին, ի հոգեւորս ենթակա լինելով հանդերձ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ու նրա գահակալին:

բ. Նախորդ պատրիարքի եղիշե սրբազանի ամբողջ պաշտոնավարության շրջանում Երուսաղեմի Հայոց վանքում կատարվել են բազմաթիվ օրինախախտումներ, գեղծումներ եւ յուրացումներ, գայթակղալից բացահայտումներով եւ դեռեւս մութ մնացող պարագաներով լեցուն: Հայաստանի մեր ժողովուրդը թերեւս ծանոթ է միայն 1967-ին պատահած ձեռագրերի գողության որոշ մանրամասների: Հանգուցյալ պատրիարքն ինքնաբերաբար հաշվետու չէր զգում միաբանական ժողովի առաջ եւ նրա հետ վարվում էր ըստ կամս, հաճախ բռնադատելով նրա անդամներին: Նույնիսկ 1980-ական թվականներին, երբ ընթացք տալով հասարակական կարծիքին, Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ն հաշվեքննիչ հատուկ հանձնաժողով կազմեց, որը տեղում ուսումնասիրելով պատրիարքության հաշվետվությունները ու կալվածոց մասյանները՝ եզրակացրեց, թե իրոք լուրջ խախտումներ են եղել այնտեղ, եղիշե պատրիարքը առ ոչինչ համարեց այդ բոլորը: Եւ երբ այդ մասին հայկական կուսակցություններից ու կազմակերպություններից միայն Ռամկավար ազատական կուսակցությունը մամուլով ձայն բարձրացրեց եւ հաշիվ պահանջեց պատրիարքից, վերջինս վայնասունով դիմավորեց այն եւ «Սիոն» ամսագրի էջերում ամենագռեհիկ որակումներով փորձեց վարկաբեկել ՌԱԿ-ը. նրա ղեկավարությանը եւ ՀԲԸ Միության նախագահ Ա. Մանուկյանին:

գ. Իր կյանքի վերջին տասնամյակին եղիշե պատրիարքն իրեն խորհրդատու եւ ֆինանսատնտեսական հարցերում գործակից էր ընտրել Շահանիկ կոչեցյալ մի կնոջ, որին լիազորություն էր տրված դրամատան հաշիվներից օգտվել իրեն համահավասար չափով, այսինքն՝ բոլորովին ինքնուրույն:

դ. Վստահորեն կարելի է եզրակացնել, որ եղիշե պատրիարքի մահից հետո, գուցե նաեւ դրանից առաջ, Շահանիկն է եղել 3-4 միլիոն դոլլարի գումարը զրպանողը, որը հնարավոր չէ պարզել, քանի որ Շվեյցարական բանկում, ինչպես տարբեր երկրներում, գործում է բանկային անձեռնմխելիության եւ գաղտնապահության օրենքը:

ե. Երուսաղեմի Հայոց պատրիարքության միջոցները գոյանում են վանքապատկան կալվածներից, նվիրատվություններից եւ զբոսաշրջիկ-ուխտավորների մուտքերից:

զ. Ներկայիս պատրիարքը Թորգոմ արք. Մանուկյանը, ընդամենը երկու տարի առաջ Ս. Հակոբյանց միաբանության կողմից ընտրվելով պատրիարք, տնաջան աշխատանքով փորձում է ի մի բերել պատրիարքության տնտեսական-ֆինանսական գործերը, կանոնավորել դրանք, վերահսկողություն սահմանել, ինչպես նաեւ վերակառուցել Հայ եկեղեցուն մեծագույն հոգեւորականներ տված վանքի ժառանգավորաց վարժարանը: ■

Միաբանակից Եղբայրներուն

Անցնող երկու տարիներու ընթացքին հետամուտ եղանք Զուիցերիոյ մեր մեր դրամատան մէջ պատրիարքարանի անունով բացուած հաշիւները ստուգելու, զանոնք պատրիարքարանիս անունին փոխանցելու համար: Սակայն դրամատան պատասխանատուները մերժեցին փոխանցումը կատարել, առարկելով, որ իրենց դրամատան մէջ բացուած հաշիւը, նախորդ պատրիարք եղիշէ Տէրտէրեանի ստորագրութեամբ, անձնական եւ անհատական հաշիւ է, եւ դրամատան ներքին օրէնքներուն համաձայն չեն կրնար որեւէ տեղեկութիւն տալ կամ ուրիշ անունի փոխանցել:

Մենք մտածեցինք, որ պատրիարքարանիս անունով եւ եղիշէ Տէրտէրեանի պատրիարքի ստորագրութեամբ բացուած հաշիւը անձնական չէ, եւ մենք նոյն հաշիւը կը պահանջենք շարունակել եւ յաջորդ պատրիարքի անունով արձանագրել:

Սուրբ Էջմիածնէն մեր վերադարձին, 1992 թ. Մայիս 21-24, ժամանեցինք գլխաւորաբար այս նպատակով: Ըստ նախապէս եղած կարգադրութեանց եւ ժամադրութեանց, ժամուն մէջ մեզի ընկերացաւ Երուսաղէմի պատրիարքարանիս փաստաբանը: Օրինական փաստաթուղթերը եւ հաստատագիրները ներկայացուեցան դրամատան վարիչներուն, որոնք ընդունեցին փոխանցման գործողութիւնները կատարել, եւ մեր ներկայութեան եւ ստորագրութեամբ այդ հաշիւը փոխանցուեցաւ պատրիարքարանիս եւ պատրիարքին անունին: Այդ հաշիւին մէջ չնչին գումար մը մնացած է, երեսուն մէկ ամերիկեան դոլլար:

1989 տարւոյ վերջին ամիսներուն, տասնեակ հազարներով «cash» (կանխիկ) գումարներ գանձուած են, չենք գիտեր որո՞ւ ստորագրութեամբ եւ ի՞նչ նպատակներու համար: Ջնջել տուինք անունը այն անձին, որուն լիազորութիւն տրուած էր նոյն հաշիւէն գանձումներ կատարելու:

Այս հարցին կապակցութեամբ ապագային կը տեղեկագրենք, երբ յաւելեալ տեղեկութիւններ կարելի դառնայ ձեռք բերել:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ա. Մանուկյանը 2 միլիոն դոլլար է նվիրում ՀԲԸՄ Լոս Անջելեսի մշակութային-երիտասարդական համալիրին

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը ժամանակի պահանջի հետ քայլ պահող կազմակերպություն է, որ իր նպատակն է բերում հայության ազգաբեղ ծրագրերին, մասնավորաբար մայր հայրենիքի այսօրվա ու վաղվա կարիքներին, ըմբռնելով նաեւ, որ սփյուռքահայության կազմակերպումն ու զորացումը առավել եւս օժանդակելու է Հայաստանի հզորացմանը:

Այդ իսկ նպատակով ՀԲԸ միությունը վերջերս հսկայական նոր զոհողություններ է հանձն առել. Լոս Անջելեսի Մարի Մանուկյան դպրոցի ընդարձակման աշխատանքների կողքին, որի համար տեր եւ տիկին Սարգիս եւ Սեդա Պեմիրճյանները նվիրել էին 1,5 միլիոն դոլլար, սանձնելով ՀԲԸՄ-ի մշակութային-երիտասարդական համալիրի ստեղծման գործը, որի համար ազգային անգուգական բարեւար Ալեք Մանուկյանը նվիրեց 2 միլիոն դոլլար, խթան հանդիսանալով նույն նպատակին ուղղված այլ նվիրատվությունների, որոնց գումարը պետք է հասնի 5 միլիոնի:

Երեկ իմացանք, որ Ա. Մանուկյանի այդ նվիրատվությունն իսկապես հաղորդական է եղել այլոց համար: Նույն նպատակով կազմակերպված հանդիսության ընթացքում հանգանակվել է 700 հազար դոլլար եւ եղել են 650 հազարի խոստումներ: Որոշված նվիրահավաքն իր լրումին հասնի, անհրաժեշտ է եւս 1,5 միլիոն:

Հայաթափման այս նոր ալիքն ունենալու է 720 տեղանոց դահլիճ, 400 նստատեղով մարզադահլիճ, 500 հոգու համար ճաշարան, զբոսասրահներ, մարզական տարբեր հրապարակներ եւ դպրոցական մի ամբողջ շենք՝ 40 դասարաններով եւ հարակից հարմարություններով: ■

digitised by A.R.A.R.@

Քաղաքական դիտորդի անկյուն

ԱՇԽԱՐՀՆ ԱՅՍՕՐ. համառոտ ուրվագծեր քաղաքական իրադարձությունների վերաբերյալ

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
«Հայաստան-Միջին Արևելք» վերլուծական կենտրոն

Եվրոպա. Մեծ Բրիտանիան անհանգստացած է Բալկանյան իրադարձություններով

Եվրոպայի սրտում բորբոքվող պատերազմում ԵԱՀԽ-ի եւ առանձնապես այնտեղ տոն տվող մեծ տերությունների միակողմանի, շահատենչ քաղաքականությունը նրա գործունեությունը տանում է դեպի փակուղի:

ԱՄՆ-ին հավանաբար հիշ է անհանգստացնում այդ կազմակերպության հեղինակությունը եվրոպական ժողովուրդների շրջանում եւ նա գերադասում է ծառայեցնել ԵԱՀԽ-ը Սերբիայի դեմ պատժիչ միջոցառումները օրինականացնելու գործին: Ռուսաստանի գլխիկոր համաձայնողականության պայմաններում Սերբիայի վրա կախվել է դամոկլյան սրի սպառնալիքը: Սակայն վերջին շաբաթվա ընթացքում նրա ավանդական մեկ այլ դաշնակիցը՝ Մեծ Բրիտանիան, բավական զգույշ, բայց նպատակային քայլեր է անում Բալկաններում սերբական գործոնը պահպանելու ուղղությամբ: Բրիտանիան հետեւողականորեն շրջկում է ԱՄՆ-ի եւ եվրոպական որոշ երկրների կողմից ձեւավորած այն կարծիքը, թե իբր Բոսնիայի արյունահեղ իրադարձությունների ողջ պատասխանատվությունը կրում է սերբական կողմը: Նա առաջադրեց բոլոր երեք համայնքների հավասարազոր պատասխանատվության տեսակետը եւ քայլեր է ձեռնարկում այն արմատավորելու համար: Բրիտանական դիվանագիտությունը ձեռնամուխ է եղել չափազանց բարդ մի խնդրի, որ նրա նպատակներն արմատապես հակասում են արեւմտյան դաշինքի մյուս անդամների ակնկալիքներին: Դժվար է ասել, թե մինչեւ որ աստիճանը նա կհակադրվի իր դաշնակիցներին, հատկապես ԱՄՆ-ին, բայց ակնհայտ դիմակայության մասին, իհարկե, խոսք լինել չի կարող: «Սերբական հրեշի» մասին արդեն իսկ ընդունված տեսակետը խախտող լուրդ Քարինգտոնի մեկնաբանությունները եւ Լոնդոնի որոշ նախաձեռնությունները, որոնց մասին «մոռացել» էին տեղեկացնել նույնիսկ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին, զուտ, բայց արտահայտիչ դժգոհություն առաջացրին վերջինիս եւ ամերիկյան տեսակետը ներկայացնող քաղաքական դիտորդների կողմից: Բրիտանիայի արտգործնախարարի հրատապ այցելությունը Նյու Յորք հավանաբար նպատակ ուներ հարթելու առաջացած կնճիռները, սակայն իրադարձությունների զարգացումը Բալկաններում Լոնդոնի համար անբարենպաստ է մնում:

Ժամանակը անխախտելիորեն մոտեցնում է այն պահը, երբ Եվրոպայում կրկին լիարժեքորեն կվերականգնվի գերմանական գործոնը: Դեռեւս Բեռլինի պատի տապալման եւ երկու Գերմանիաների վերամիավորման ժամանակ արեւմտյան դաշնակցության հաղթանակի ուրախության հետ մնկտեղ բրիտանացիներն ու ֆրանսիացիները զգալի անհանգստություն էին ցուցաբերում ակնկալվելիք փոփոխությունների նկատմամբ: Նատոյական պատերազմներից հետո միայն նույն կառին լծված Լոնդոնի ու Փարիզի միջեւ աղագայի ընտրության հարցում տարաձայնություններ առաջացան: Բրիտանիան առավել, քան որեւէ մնկը Եվրոպայում, կողմնակից է ԱՄՆ-ի ռազմատաքսական հասատուն ներկայությանը աշխարհամասում եւ զուտ է վերաբերում «Միացյալ Եվրոպայի» ձեւավորման արագընթաց տեմպերին, արդարացիորեն երկյուղելով, որ ամենաուշը մեկ տասնամյակ հետո քաղաքական, տնտեսական եւ այլ գործոններով միավորված Գերմանիան այնտեղ իրեն հավասարը չի ունենա: Իսկ Փարիզն ընդհակառակը, ջանք չի խնայում ամերիկյան ազդեցությունը սահմանափակելու եւ Գերմանիայի հետ դաշնակցած նոր Եվրոպայի առանցքը դառնալու համար: Ահա այս տեսանկյունից Բալկաններում ծավալվող իրադարձություններին անդրադառնալու դեպքում կարելի է ըմբռնել Լոնդոնի անհանգստության հիմնավոր պատճառները: Երկրները, որոնք առաջանում են նախկին Հարավսլավիայի փլատակների վրա, Բրիտանիայի աղագա դաշնակիցներ ոչ մի կերպ չեն անվանի: Սլովենիան եւ հատկապես Խորվաթիան գերմանամետ ուղղվածության հին ավանդույթներ ունեն: Դա նշանակում է, որ Գերմանիան աղահովելու է իր ազդեցության պորտը Հյուսիսային ծովից մինչեւ Ադրիատիկ: Եթե դրան ավելացնենք, որ արեւելաեվրոպական երկրների գերակշռող մեծամասնությունը հայացքն ուղղել է դեպի զարգացում աղրող Գերմանիան, ի դեմս նրա տեսնելով Ֆինանսատնտեսական աջակցության կայուն աղբյուրի, աղա պարզ են դառնում գերմանական քաղաքական-տնտեսական էքսպանսիայի իրական ծավալները: Մահմեդական Բոսնիան եւս Լոնդոնի կարիքը առանձնապես չի զգալու, քանզի ակնհայտ է ամերիկա-թուրքական խնամակալության հեռանկարը: Մնում է Հռոմասանը, բայց վերջինիս քաղաքական հեղինակությունը անարգել անկում է ապրում ողջ Եվրոպայում, իսկ տնտեսության հետադիմությունը չի կանգնեցնում նույնիսկ Եվրահամայնքի տարողունակ աջակցությունը: Վերջին մեկ տարվա ընթացքում արեւմտյան դաշնակցության ստրատեգիական ծրագրերում Թուրքիայի ռազմաքաղաքական դերի աճին զուգահեռ, Հռոմասանի դիրքորոշումը եվրոպական խնդիրների նկատմամբ (Կիպրոսի խնդիրը, Եվրահամայնքում Թուրքիայի ընդգրկման հարցը եւ այլն) ավելի շատ ջղայնացնում է նրա դաշնակիցներին, քան ունկընդրելու ցանկություն առաջացնում: Համբերության վերջին կաթիլը, որ հավասարակշռությունից հանեց ողջ Արեւմուտքը, Հռոմասանի համառ կեցվածքն էր Մակեդոնիայի անկախության միջազգային ճանաչման հարցում: Հռոմասանին սկսեցին մեղադրել քաղաքական ճկունության բացակայության, սպառողական հոգեբանության եւ այլ բնութագրումների մեջ, որոնց հիմնական մասը համապատասխանում է իրականությանը: Հռոմասանը բոլոր պարամետրերով հետաքրքրություն է առթում, ինչը չի կարող չազդել նրա ազգային խնդիրների ճակատագրի վրա: Արեւմուտքը հերթական անգամ առաջադրում է Կիպրոսի խնդրի հանգուցալուծման անչափ բարդամեծ ծրագիր եւ գայրանում, որ հույները դա արդարացիորեն անընդունելի են համարում: Տղավորությունն այնպիսին է, որ Հռոմասանն ու Թուրքիան փոխվել են իրենց տեղերով եւ արեւմտաեվրոպական հանրության աչքում գնալով ավելի բացասական կերպար է ստանում Հռոմասանը, որն ընդամենը սկզբունքորեն պաշտպանում է Կիպրոսի տարածքային անձեռնմխելիության իրավունքը, քան Թուրքիան, որի զորքերը բռնազավթել են Կիպրոսի հյուսիսը եւ անդամահատել երկիրը: Բալկաններում տիրող այս իրողությունների պայմաններում Մեծ Բրիտանիան չի կարող սառնասիրտ հանգստություն ցուցաբերել: Բայց կրավարարե՞ն արդյոք Լոնդոնի ավանդական դիվանագիտական կարողությունները իրադրությունը շտկելու համար, դժվար է կանխատեսել:

Իրանական ազդեցության դեմ պայքարը ծավալվում է ամբողջ ուժով

Իրանական երակի հետ կապված երկու երկրները Աֆղանստանն ու Տաջիկստանը դարձել են քաղաքացիական պատերազմների թատերբեմ, որ գլխավոր խնդիրը իրանական ուժերի չեզոքացումն ու դուրս մղումն է այդ երկրների քաղաքական ասպարեզից: Ինչպես եւ սպասվում էր, արտաքին ուժերի ակտիվ աջակցությամբ Տաջիկստանը բաժանվեց բենամական ճամբարների, որ պատկանելությունը «դեմոկրատներին», ներկա վարչակարգի նախանձախնդիր պաշտպաններին եւ իսլամական արմատականներին տարածքային, համայնքագերդասանային հստակ ուրվագծեր ունի: Նման գործելակերպն ամբողջովին համապատասխանում է համայնքացեղային կառուցվածք ունեցող երրորդ աշխարհի երկրներում մեծ տերությունների քաղաքականության ավանդույթներին, երբ իր կողմը գրավելով որեւէ տարածքի եւ այն բնակեցնող համայնքի կամ ցեղի առաջնորդին, կոնկրետ գաղափարական դրոշի տակ է համախմբվում նրան ենթարկվող ողջ բնակչությունը: Ընդ որում, ընդգծված հակառությունները հանդերձ, Նաբիեւի կողմնակիցներն ու «դեմոկրատները» պայքարում են ընդհանուր հակառակորդի՝ իսլամականների դեմ, թեեւ ընդամենը մի քանի ամիս առաջ վերջին երկուսը նույն սայլին լծված պայքարում էին Նաբիեւի նեոկոմունիստական վարչակարգի դեմ: Օգտվելով երկրում ստեղծված իրավիճակից, Ռուսաստանը, ԱՊՀ սահմանները պաշտպանելու պատրվակով, ավելացնում է իր ռազմական ուժերը Տաջիկստանում: Պետք է ասասել, որ մինչեւ առաջիկա ընտրությունները ռուսական չափի ներքո գործող ուժերը զգալի հարված կհասցնեն իսլամականներին: Այսպիսով, կրոնական շարժման ղեկավարներին չօգնեցին անընդհատ կրկնվող հավասիացումները, թե իրենք աշխարհիկ պետության կողմնակից են եւ հանրապետությունում իրանական տիպի վարչակարգ չեն հաստատելու: Այս պարզունակ խաբկանքը չէր կարող բավարար փաստարկ լինել ոչ Ռուսաստանի, ոչ էլ նրա ավագ ընկերոջ՝ ԱՄՆ-ի համար:

Սակայն Մոսկվայում եւ Վաշինգտոնում լավ են գիտակցում, որ իրանական ոճի կրոնական արմատականության տարածումը Միջին Ասիայում հաղթահարված չէ, քանի դեռ Աֆղանստանում ազդեցություն են վայելում եւ ամուր դիրքեր ունեն իրանամետ քաղաքական ուժերը: Ուստի ԱՄՆ-ը գործի դրեց երկար տարիներ շարունակ նախապատրաստած իր պահեստային տարբերակը ի դեմս Սաուդյան Արաբիայի կողմից հովանավորվող զինված ջոկատների: Վերջին շաբաթվա ընթացքում Քաբուլից տագնապալի լուրեր են գալիս շիա եւ սունի պատշամանների հետեւող զինված ջոկատների արյունալի ընդհարումների մասին: Հասկանալի է, որ եթե սաուդամետ սունի ջոկատները հաջողություն հասնեն, աղա Իրանը զգալիորեն կհեռացվի Տաջիկստանից եւ միջինասիական այլ հանրապետություններից եւ, որ առավել կարեւոր է, կզրկվի երրորդ երկրի միջոցով գործելու հնարավորությունից: Իսկ անմիջական միջամտությունը, իրանամերձիկյան լարված հարաբերությունների ներկա պայմաններում, Իրանի համար հղի է անկանխատեսելի հետեւանքներով: Այսպիսով, Միացյալ Նահանգները արագ ոճի եկան Քաբուլի համայնավար վարչակարգի անկումին հաջորդած հաղթական լուրջ թեւացումների ցնցումից եւ իրադարձությունների զարգացումը դնում են իրենց ստրատեգիական շահերին համապատասխանող հունի մեջ:

Արաբ-իսրայելական հակամարտության կարգավորման մասին

Դամասկոսյան առանցքի արաբական երկրներն ու Իսրայելը, ԱՄՆ-ի ուղղիր եւ գործունյա հրկոդությամբ, քայլ առ քայլ հաղթահարում են շուրջ կեսդարյա արյունալի եւ խիստ դրամատիկ հակամարտության ստեղծած հոգեբանական միջնադարյան դիմակայությունը: Աշխարհը կարող է ձերբազատվել նորագույն պատմության ամենաբարդ եւ ընդամենը երկու տարի առաջ անլուծելի թվացող հանգույցից: Բայց այսօր արդեն շատերը գիտակցում են, որ խաղաղ կարգավորման ընթացքին զուգահեռ անխուսափելի արմատական տեղաշարժեր են սպասվում ինչպես փոխադարձ հարաբերություններում, այնպես էլ արաբական աշխարհի երկրներում եւ Իսրայելում: Պաղեստինյան խնդիրը եւ նրա շուրջ ծավալվող հակամարտությունը արաբական ավտորիտար վարչակարգերի իշխանության գլխավոր հենարանն էր: Շուրջ հինգ տասնամյակ շարունակ բազմամիլիոն բնակչության համախմբվածությունը եւ բավական բարդ ներքին խնդիրների մղումը երկրորդ պլան իրականացվում էր ազգային խնդրի շահարկման շնորհիվ: Չկար մի վարչակարգ, որն իր թեւացումներն ու բացահայտ աղաշնորհությունը չարդարացներ պատերազմով թելադրված «օբյեկտիվ» պատճառներով: Համաարաբական ազգային գործին մատուցած ծառայությունները համեմատաբար մեղմում էին նաեւ միջարաբական հարաբերությունների լարվածությունը, հատկապես, հարուստ Ծոցի եւ կարիքավոր երկրների միջեւ: Ի՞նչ կլինի արաբական աշխարհում, եթե պաղեստինյան խնդիրը դուրս գա օրակարգից: Օրինակ, դժվար է պատկերացնել Քաղաքիի հետագա իշխանությունը մի երկրում, որը տասնամյակներ շարունակ ոչ միայն ռազմականացվում էր իմպերիալիզմին եւ սիոնիզմին վերջին հարվածը հասցնելու համար, այլեւ դասիարակել է մի ողջ սերունդ, որն իր աղագան չի պատկերացնում առանց համաարաբական խնդրի առնչությամբ զանգվածային փսիխոզի: Ինչի՞ վրա են հիմնվելու երկու ԲԱԱՍները եւ ընդհանրապես ազգայնականությունը, որն արաբական աշխարհը կրոնական արմատականությունից դուրս պահելու միակ կայուն երաշխիքն է: Թերեւս առայժմ արաբական միացյալ պետության ստեղծման գաղափարի վրա, բայց դա ոչ մի ձեւով համարժեք չէ պաղեստինյան խնդրի առնչությամբ, տաք ազդակներին: Իսկ միջարաբական տարածքային պահանջներն ու պատմական հակասությունները՝ Չէ՞ որ նրանք սառեցված են ընդհանուր թշնամու առկայության պատճառով: Կա նաեւ աղագա Պաղեստինը սեփական պատկերացումների համաձայն կառուցելու տասնյակի հասնող կազմակերպությունների հակամարտության խնդիրը: Անխուսափելի է թվում նաեւ դեմոկրատացման ընթացքի զարգացումը, որի պահանջը անմիջապես կծառանա արաբական վարչակարգերի առջեւ եւ որին հանձնայնդեղս այսօր նրանք պատրաստ չեն: Հետաքրքիր է, որ արաբական երկրներում գործող բազմաբնույթ ընդդիմության համար նոր պաղեստինյան հանգույցի բացակայությունը շատ ավելի հարված է լինելու: Ի՞նչ խնդիր են շահարկելու իրենց ազգայնական վարչակարգերի դեմ պայքարող առավել ազգայնական ընդդիմադիր ուժերը: Նշանակում է, որ ներքաղաքական բաներաբեմում հիմնական բախումը լինելու է կրոնական արմատականության եւ դեմոկրատական ուղու ընտրության միջեւ: Իսկ այս խիստ բեռացված ուժերի դիմակայություն է, որը հղի է լուրջ հետեւանքներով:

Ինչեւիցե, ընթացքը զարգացում է ապրում եւ, առաջ բերող խնդիրներով հանդերձ, լավ հեռանկարներ է բացում ողջ Միջին Արեւելքի համար: Եթե արաբական երկրների վարչակարգերն ու ժողովուրդները տարբ չտան զգացմունքայնությանն ու խաղաղության գործընթացի առաջին մակերեսային ազդակներին, աղա նրանք հնարավորություն կունենան Արեւմուտքի աջակցությամբ քաղաքական-տնտեսական արմատական բարեփոխումներ իրականացնել, որը նոր էջ կբացի արաբական աշխարհի պատմության մեջ: Արեւմուտքի ակտիվ մասնակցությամբ արաբա-իսրայելական ինտեգրացիան վերջինիս միջազգային, տնտեսական լայն հնարավորություններով էապես կփոխի աշխարհի աշխարհագրական, տնտեսական եւ քաղաքական քարտեզը: Դժվար է նույնիսկ պատկերացնել, թե ինչի կհասնեն Իսրայելն ու արաբական աշխարհը համատեղ ջանքերով, եթե սպառազինությանը տրամադրվող միլիարդավոր դոլարներն ուղղվեն տնտեսության որոշ, կարգավորեն շրջանի հաղորդակցական ուղիները, իրենց համակարգի մեջ ընդգրկեն ստրատեգիական հումքի հզոր աղբյուրներ հայտնաբերած թուրքական աշխարհը: Բայց այստեղ պետք է կանգ առնել, որովհետեւ այսօր նման կանխատեսումը ցնորք է թվում, ինչպես ժամանակին ցնորք էր թվում խորհրդային համակարգի փլուզման հնարավորությունը, կամ երկու տարի առաջ միջինարեւելյան խաղաղ կարգավորման ընթացքի անխուսափելիության կանխատեսումը: Կացության շեղումը բույլ չի տալիս ընդգրկուն մոտեցում ցուցաբերել աշխարհաքաղաքական մեծ տեղաշարժերի նկատմամբ, մանավանդ որ վերեւում արդեն նշեցինք այն բարդ խնդիրների փոքր մասը, որը իմնին բացառում է իրադարձությունների զարգացման նման տարբերակը: ■

digitised by A.R.A.R.@

Կենդանիների զարմանալի ունակությունները

Գիտակցությո՞ւն թե բնազդ



Այլ հարցերի քվում մարդկանց միշտ հետաքրքրել է, թե կենդանիներն ունե՞ն արդյոք դատողություն, եւ եթե այո, ինչպե՞ս է դա արտահայտվում: Օրինակ, հայտնի է, որ կանաչ կաղիկները տարբեր տնայնության տագնապի ճիչեր են արձակում, նայած այն բանին, թե գիշատիչն արծիվ է, ընձառյուծ թե օձ: Ի՞նչ է սա, հաղորդակցման ձե՞ւ: Գորիլլան նկատում է ծառի վրայի ցանկալի պտուղը, բայց ոտքը կախ է գցում, մինչեւ ամբողջ խումբն անցնի եւ աղա միայն ճաշակում է համեղ պտուղը, որ իրեն չխանգարեն: Խորամանկությո՞ւն է: Փղի երկվորյակ ձագերից մեկը Ֆիզիկապես թույլը, որպես կանոն, դատապարտված է մահվան, քանզի միշտ երկրորդն է կերակրվում եւ վաս է սնվում: Բայց եղել է այսպիսի դեպք, երկվորյակները քույր ու եղբայր էին: Քույրը թեւ Ֆիզիկապես թույլ էր, բայց մի խաղ էր հնարել, որի ընթացքում եղբայրը հոգնում էր եւ դադարում ջուր առնելու, մինչ քույրը վազում էր մոր մոտ եւ լիուլի կաթ խմում:

«Կենդանիների դատողությունը» գրքի հեղինակ հոգեբան Ժակ Վոկլերն այդուհանդերձ նշում է, որ «դատողություն» բառի փոխարեն կենդանիների դեպքում առավել ստույգ կլիներ «ճանաչողություն» տերմինը: Թեեւ, ընդհանուր առմամբ, խոսքը նույն երեւույթների մասին է, ուսուցում, հիշողության ամրագրում, տարածական կողմնորոշում, հաղորդակցում, տեղեկատվության մշակում վճռի կայացման համար: *«Հիմա հայտնի է, որ կենդանիները մեքենաների պես ծրագրավորված չեն ծնվում միայն շրջապատի ազդակներին ինքնաբերաբար արձագանքելու համար: Նրանց հատուկ է ոչ միայն բնազդը, այլեւ հարմարվելու ունակությունը»*, գրում է Վոկլերը:

Լաբորատոր պայմաններում կենդանիները գիտնականների առաջադրած մտամարզանքների շնորհիվ ի հայտ են բերում նոր եւ զարմանալի ունակություններ: Բաբուիններից՝ աֆրիկյան այդ կապիկներից մեկը համակարգչի էկրանի վրա էլեկտրոնային խաղ է խաղում եւ ամեն անգամ թիրախը խոցելիս սնունդ ստանում: Նա կարողանում է նաեւ ընկել էկրանին սխալ դիրքով հայտնված տառը: Շիմպանզեները սովորում են խորհրդանշանների լեզուն եւ մինչեւ 150 բառ օգտագործում որեւէ բան պահանջելու կամ գիտնականների հարցերին պատասխանելու համար:

Միաժամանակ նշենք, որ անապատ պայմաններում միայն շիմպանզեն եւ օրանգուտանն են հասել «հայելու փուլին»: Իրենց պատկերը տեսնելիս մյուս կենդանիները շփոթվում են: Մինչդեռ շիմպանզեն դիտարկման կարճատեւ փուլից հետո դիմախաղի կամ այլ շարժումների շնորհիվ ընթռնում է, որ հայելին առարկա է եւ սկսում է օգտվել դրանից, օրինակ, իր մարմնի այն մասերը զննելու համար, որոնք ինքը սովորաբար չի կարողանում տեսնել:

Գաբոնի գորշ թութակները, ի հեճուկս տարածված տեսակետի, միշտ չէ, որ խոսում են պարզ ընդօրինակմամբ: Նրանցից մեկը կարողացել է յուրացնել ավելի քան 120 բառ, որոնց իմաստները կատարելապես ընթռնում է: Նա այդ բառերն օգտագործում է առարկաներ նշելու կամ սնունդ պահանջելու համար: Եւ եթե հանկարծ խաղող պահանջի եւ եգիպտացորեն ստանա, երբեք չի համակերպվի. թութակները շատ համառ են: Թվաբանության ասպարեզում նա հասել է գրեթե նախակրթարանի դասընթացի մակարդակին: Քանակները, գույները եւ ձեւերը համեմատելու կամ զանազանելու նրա կարողությունը գրեթե համարժեք է 5-6 տարեկան երեխայի ունակությանը:

Դելֆինների մտավոր կարողությունների վերաբերյալ 1970-ական թթ. գոյություն ունեին չափազանցված պատկերացումներ: Այսօր նրանք հայտնի են որպես հմայիչ կենդանիներ, խաղի սիրահարներ, լավ ընդօրինակողներ: Մի անգամ հսկա ակվարիումի առջեւ այցելուներից մեկը ծխախոտի ծուխը փչեց աղակտ վրա: Մի փոքրիկ դելֆին դա նկատելուն պես լող տվեց մոր մոտ, մի պահ կաթ ծծեց եւ աղա այդ կաթը «փչեց» ակվարիումի աղակտ վրա: Դելֆինների հարցում ամենամեծ առեղծվածը մնում են նրանց արձակած հնչյունները:

Առանձին խումբ են կազմում ընտանի կենդանիները, որոնց մենք, այնուամենայնիվ, բավարար չափով չենք ճանաչում, երբեմն մեր մտածելակերպը վերագրելով նրանց: Այսպես, դարասկզբին Գերմանիայում լայն համբավի էր արժանացել Խորամանկ Նանս անունով ձին: Տերը ձիուն թվաբանական պարզ գործողություն էր առաջադրում, եւ Նանսը սմբակներով հողին էր խփում այնքան անգամ, որքան պատասխանի թիվն էր: Մի խոսքով, Նանսը «հաշվել» գիտեր: Սակայն մի հոգեբան կարողացավ ապացուցել, որ Նանսը ոչ այնքան հաշվում էր, որքան նուրբ դիտողականությամբ հետեւում տիրոջ գլխի ինքնաբերական եւ գրեթե անընկալելի այն շարժումներին, որոնք տեղի էին ունենում ճիշտ պատասխանի դեպքում: Կույրերին ուղեկցող շները կարողանում են գործ ունենալ բազմաթիվ առարկաների հետ, կողմնորոշվել մեքենայում, վերելակում, խաչմերուկներում: Շները կարողանում են ազդել իրենց տերերի վարքագծի վրա: Օրինակ, վզակապն են բերում եւ դրանով հասկացնում, որ իրենք ուզում են զբոսնել: Ի տարբերություն կատուների, շները «խմբակային» կենդանիներ են եւ նրանց ներհատուկ է գործակցության ոգին: Ռոսաշների հաչոցների տնայնության համեմատ որսորդներն իմանում են, թե շները որ կենդանու հետքի վրա են ընկել: Կատուները մենակյաց են, հաղորդակցվել այնքան էլ չեն սիրում: Նրանք մարդկանց միջավայրում համեմատաբար հիշ են ապրել, թեեւ կարողանում են ընթռնել «նստիր», «պառկիր» հրահանգները եւ այլն: Բայց վայրի բնության մեջ հայտնվելու դեպքում կատուները հեշտությամբ հարմարվում են պայմաններին:

Ոչ ոք չի փորձել չափել կոլերի մտավոր գործակիցը: Բայց հայտնի են նրանց դիտողականությունն ու հիշողությունը: Եթե որեւէ մարդ մեկ անգամ մտնի գոմ եւ վաս տղավորություն գործի կամ նեղացնի կենդանիներին, կովերը նրան կճանաչեն նույնիսկ երկու տարի հետո: Նույնիսկ 8-9 ամիս արոտավայրերում անկացնելուց հետո նրանք ճշտիվ վերհիշում են, թե իրենք ինչ հերթականությամբ են շարված եղել գոմում: Քանզի կովերն իրենց միջավայրում պահպանում են ոչ միայն աստիճանակարգ, այլեւ ընկերական հարաբերություններ:

Մեղո՞ւն է խելոք, թե՞ պարսը: Առաջին տղավորությունն այն է, թե հասարակական միջատները ոչինչ են առանց խմբի: Այդուհանդերձ, ծաղկից թռչող մեղուն քամու ընթացքին կամ պատահականությանը չի հետեւում: Նրա տեղաշարժերը նպատակային են: Նրա ստացած տեղեկությունները գլխավորապես հոտառական են: Բուրմունքների բազմազանության մեջ նա թռչում է դեպի այն կողմ, որտեղ սնունդը ամենից առաջ է: Մեղուն ենթարկվում է իր ծագումնաբանական ծրագրին: Փեթակ վերադառնալով, մեղուն ընկերներին ազդանշաններով տեղեկացնում է իր գտած ծաղկափոշու տեղի եւ բանակության մասին, նշելով տեղադրությունը փեթակի եւ Արեգակի դիրքի նկատմամբ:

Շարադրված բոլոր փաստերը վկայում են, որ կենդանիները յուրովի խելացի են: Բայց «ինչո՞վ» են նրանք մտածում, եթե լեզու չունեն: *«Ոչ ոքի չի հաջողվել թափանցել կաղկի ուղեղի մեջ*, ասում է կենդանագետ Բորիս Ցիրյուլնիկը: *Հավանաբար տեղի է ունենում պատկերավոր մտային մենախոսություն, Ֆիլմի պես մի բան: Մարդկանց հետ դա պատահում է ուղեղի որոշ հիվանդությունների դեպքում, երբ լեզվական կենտրոնը վնասվում է»:* Լեզու՝ ահա ամեն ինչի բանալին: Այն նախորդում է նույնիսկ խոսքին: Օրերից մի օր մանկիկը մաս-մաս դարգում է այս կամ այն առարկայի կողմը: Նա ցույց է տալիս: Դա գրեթե անվանելու, իմաստավորելու պես մի բան է, դեպի վերացարկում տանող դուռը: Թվում է, մեծ բան չէ, սակայն ոչ մի կաղիկ երբեք դրան չի հասել:

Ըստ «LE POINT» հանդեսի նյութերի

Նախկին այլախոհը Մոսկվայի քաղաքապետի պաշտոնի հավանական թեկնածու

Բուկովսկուն առաջարկվել է Մոսկվայի քաղաքապետը, սակայն առայժմ նա համաձայնություն չի տվել

Մոսխորհրդի նախագահի տեղակալ Յուրի Սեդիխ-Բոնդարենկոն հաստատեց, թե անվանի իրավապաշտպան եւ նախկին այլախոհ Վլադիմիր Բուկովսկին Մոսկվայի քաղաքապետի պաշտոնի թեկնածուներից է: Ընտրությունները կարող են կայանալ դեկտեմբերի 5-ին: Մոսխորհուրդը հունիսի 25-ին որոշում է ընդունել ընտրություն անցկացնելու վերաբերյալ, քանզի, պատգամավորների մեծամասնության կարծիքով, Յուրի Լուժկովն անօրինական է նշանակվել այդ պաշտոնին, Գավրիլ Պոպովի հրաժարականից հետո:

Երկուշաբթի օրը ելույթ ունենալով Մոսխորհրդում, Վլադիմիր Բուկովսկին մտահոգություն հայտնեց՝ կազմված ժողովրդավարության ճակատագրի հետ: Նրա կարծիքով, ինքը հազիվ թե ներգրավվի քաղաքական գործունեության մեջ: Հայտարարելով, թե գործարարական վերակառուցումը խաթարություն է, Բուկովսկին հայտնեց, թե չի կարող մնալ կոնֆլիկտների միության մեջ, որոնք այժմ իշխանության գլուխ են եկել: Բուկովսկու համոզմամբ, պետական այժմյան կառուցվածքներն անում են ամեն ինչ, որպեսզի այնպիսիներին, ինչպիսին ինքն է, չթողնեն իշխանության գալ: *«Միայն քաղաքական ընտրություններով իրադրությունը Ռուսաստանում չես բարելավի»*, ընդգծեց նա:

Գնահատելով Ռուսաստանի այժմյան կացությունը, Բուկովսկին հայտարարեց, թե այժմյան թղթվությունը կոմունիստների ժամանակաշրջանի արդյունք է, միաժամանակ ընդգծելով, թե *«Երկրի-Գայդարի կառավարությունը բարեփոխումներ անցկացնելու հնարավոր բոլոր սցենարներից ընտրել է վատագույնը»:*

Խոսելով քաղաքական իրադրության մասին, նա ասաց, թե չդեմ է վախենալ գործադուլներից եւ հակամարտություններից, երկրին անհրաժեշտ է զանգվածային անհնազանդության եւ համընդհանուր գործադուլի արշավ: Նրա կարծիքով, իշխանությունը 1991 թ. օգոստոսից հետո անցել է պատահական մարդկանց ձեռքը, որոնք կազմավորել են ազգասական կոմունիստների եւ դեմոկրատների ինքնաշխատ մի կոալիցիա եւ չեն կարողացել մշակել արմատական բարեփոխումների ծրագիր:

Բուկովսկու կարծիքով, օգոստոսին հնարավորություն կար վերջնականապես ջախջախել վիրավոր կոմունիստական վարչակարգը, առաջին հերթին ցրելով եւ ոչնչացնելով ՊԱԿ-ը: Նա հայտնեց, թե *«ՊԱԿ-ի արտաքին ծառայությունները կանգնած էին օգոստոսյան իրադարձությունների հետեւում. ես համոզված եմ դրանում, թեեւ ապացույցներ չունեմ»:* Դրա անուղղակի հաստատումն են, Բուկովսկու խոսքերով, բարձրաստիճան կուսակցական մի շարք չինովնիկների հանելուկային ինքնասպանությունները: *«ՊԱԿ-ի հետախուզական առաջին վարչությունը արտաքին հետախուզությունը կանգնած է նրանց թիկունքում, ովքեր իրենց նեստում էին պատուհաններից»*, ընդգծեց նա:

Ներկայումս, նրա կարծիքով, հնարավոր է իրադարձությունների զարգացման երկու տարբերակ.

1. Երբ Ստերլիգովի պես մարդիկ, ինչպես նաեւ գեներալիտետի ներկայացուցիչները կփորձեն միավորել երկիրը, օգտագործելով սոցիալական պայթյունը, որի հավանականությունը բավականին մեծ է: Այդ ուժերը չեն կարող գալ իշխանության, քանզի նրանք չունեն որոշակի ծրագիր, իսկ բանակի վրա հենվելը պարտություն կբերի:

2. Սոցիալական տարերային պայթյունը, որը քաղաքական կուսակցություններից եւ ոչ մեկը չի կարող օգտագործել: Դա կբերի երկրի մասնատմանը, երբ առանձին տարածքներն ինքնուրույն կսկսեն որոշել, թե ինչ անեն: Դա կբերի պետության քայքայմանը առանձին իշխանությունների:

Վերջում Վ. Բուկովսկին հայտնեց, թե չի կարող համաձայնություն տալ քաղաքապետի պաշտոնին, քանզի, նրա խոսքերով, մոսկվացիների ճնշող մասին պատել է քաղաքական հակազդեցությունը: *«Մինչեւ ես չզգամ, որ մթնոլորտը բավականին թեժացել է, որ ժողովուրդը պատրաստ է հակամարտության, ես չեմ կարող լինել քաղաքապետի պաշտոնի թեկնածու: Եթե ես զգամ, որ այդպիսի մթնոլորտն արդեն կա, պատրաստ կլինեմ պայքարել եւ ամեն ինչ անել ժողովրդավարության զարգացման համար»*, ասաց նա: ■

Կուրիլյան կղզիների հանձնումը անբահավեստ է

Ռուսաստանի ԳԽ պաշտպանության եւ անվտանգության հարցերի կոմիտեի նախագահ Ս. Ստեպաշինը գտնում է, որ Հարավ-Կուրիլյան կղզիները ճապոնիային հանձնելու հարցը ժամանակավրեպ է առաջին հերթին ելնելով Ռուսաստանի անվտանգության տեսանկյունից: Այդ մասին նա հայտնեց խորհրդարանում ռուս-ճապոնական հարաբերությունների մասին լսումների ընդմիջման ժամանակ «ԻԺ»-ին տված հարցազրույցում: Եթե վիճարկելի կղզիները տրվեն ճապոնիային, ապա այնտեղ տեղակայված Ռուսաստանի ռազմածովային բազաների վերացումը ռազմածովային նավատորմը կդնի «ամերիկյան նավատորմի հետ համեմատած ոչ շահավետ պայմաններում», ասաց Ստեպաշինը: Նրա կարծիքով, «այսօր Հարավ-Կուրիլյան կղզիների հարցը քննարկելիս պետք է ընդգրկվեն 1944 թ. Յալթայի համաժողովի բոլոր մասնակիցները, որոնք ժամանակին մասնակցել են այդ խնդրի լուծմանը: ■

Ռուսաստանը կրկնապատկում է մսի եւ կաթի դոտացիաները

Ռուսաստանի կառավարությունն ավելի քան երկու անգամ ավելացրել է մսի, կաթի եւ ձվի արտադրության դոտացիաները: Այժմ մսի մեկ կիլոգրամի համար, որը կհանձնվի պետությանը, գյուղացին կստանա 18,3 ռուբլի հավելավճար, փաստորեն երկրորդ գինը (մսի միջին մեծածախ գինը կազմում է մոտ 22 ռուբլի): Կաթի մեկ լիտրի համար դոտացիան կազմում է 3,4 ռուբլի, մեկ տասնյակ ձվի համար՝ 2,1 ռուբլի: Նախքան դոտացիայի մտցնելը, արտադրողներն աշխատում էին վնասով: Այժմյան գների պայմաններում կապահովվի մսի, կաթի եւ ձվի արտադրության նվազագույն եկամտաբերություն՝ մոտավորապես 10-25 տոկոս: Անասնապահության բնագավառում այս տարվա երկրորդ կեսին պետությունը հատկացնելու է 105 միլիարդ ռուբլի: ■

Միջոցառումներ կովկասցիների դեմ

Տեղացի բնակչության հետ մի քանի ընդհարումներից հետո, երբ գործի դրվեցին դանակները, Բրյանսկի իշխանություններն սկսեցին միջոցներ ձեռնարկել այսպես կոչված «կովկասյան ազգությունների անձանց» դեմ, որոնք աշխույժ առեւտուր են անում տեղական շուկաներում: Այսուհետ Անդրկովկասից առանց գործուղման ժամանակներին չեն տրամադրվի հյուրանոցային համարներ, իսկ շուկայում տեղ ստանալու համար նրանք պետք է ներկայացնեն գյուղխորհրդի տեղեկանքն այն մասին, որ վաճառվող բանջարեղենն ու միրգը աճեցվել են սեփական հողատարածքում: *«Մենք գիտակցում ենք, որ այս միջոցառումներն իրավական հիմք չունեն, դրա համար էլ նրանք ժամանակավոր բնույթ են կրում»*, հայտարարեց Բրյանսկի ՆԳ վարչության պետի առաջին տեղակալ Վասիլի Պետունովը: Միեւնույն ժամանակ նա խոստովանեց, որ կովկասցիներին շուկայից վտարելուց հետո *«մրգերը չաճեցան եւ դրանց գինը չիջավ»*: ■

Վրաստանի տնտեսությունը ճգնաժամի մեջ

Վրաստանում արտադրվող արդյունաբերական ապրանքների ընդհանուր ծավալն այս տարվա առաջին կեսին կրճատվել է երկու անգամ՝ համեմատած նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ: Այդ մասին հայտարարեց Վրաստանի փոխվարչապետ Ռոման Գոգիրիձեն, երկուշաբթի օրը բացված Վրաստանի Պետխորհրդի եւ կառավարության համատեղ նիստում: Քննարկվում են տրնտեսական բարեփոխումների ընթացքը, ժողովրդական տնտեսության գործունեության սոցիալ-տնտեսական արդյունքները, պետական բյուջեի կատարումը 1992 թ. հունվար-հունիս ամիսներին: Գոգիրիձեի խոսքերով, գյուղատնտեսական շրջանների մեծամասնությունը նույնպես երկու անգամ կրճատել է իր արտադրանքի մատակարարումը պետությանը: Գործնականում չի աճեցվում շինարարական համալիրը: ■

digitised by A.R.A.R.@

«Աշխարհը եւ մենք».

ու՞ր էին սփյուռքահայ կոմոդոզիտորները

Այս տարիներին, երբ սխալ հասկացված շուկայական հարաբերությունների փոխարեն ստեղծված «խուժան բազարը» խեղդել է արվեստն ու գրականությունը, եւ, ինչպես ժամանակին հանճարեղ Ռոբեն Սեւակն է գրել, «Արծաթն արվեստը կախաղան է հանել», առավել եւս շեշտվում է կարեւորությունը մեր ազգային սիմֆոնիկ նվագախմբի...

Այն նվագախմբի, որը Լորիս Ճգնավորյանի ղեկավարությամբ եւ «Պրոմեթեւս»ի հովանու տակ, շաբաթը մի անգամ երջանի՞կ հնարավորություն է ստեղծում արվեստի իսկական սիրահարների համար ոչ միայն ճաշակել երաժշտության չքնաղ արվեստն, այլեւ այդ համերգներում մաքրվել առօրյա դառնություններից ու հոգսերից՝ եւ հոգով վեհանալ...

Հաստատես գնահատելի է սիմֆոնիկ նվագախմբի՝ մեր իրականության մեջ եզակի, «Աշխարհը եւ մենք» համերգաշարը, որը, բացի իր ղեկավարած գեղագիտական մեծ հաճույքից, համաշխարհային դասական երաժշտության մի հանրամատչելի ժողովրդական համալսարան էր: Երաժշտական մի համառոտ ու հիանալի ծաղկաքաղ կամ հավաքածու էր այն, որի միջոցով մեր ունկնդիրները հնարավորություն ստացան ծանոթանալ աշխարհի շատ երկրների անցյալ ու ներկա ամենից հետաքրքիր կոմոդոզիտորների գլուխգործոցներին՝ Վագներից, Գրիգից ու Չայկովսկուց սկսած մինչեւ Գերշվին, Բրիտեն ու Կոդլանդ... Ինչքան ինձ հայտնի է, մեր սիմֆոնիկ նվագախումբն ու ժամանակակից հայ կոմոդոզիտորները երբեմն դժգոհում էին իրարից, թե սիմֆոնիկը հազվադեպ եւ մեծ դժվարությամբ է կատարում ժամանակակից հայ կոմոդոզիտորների գործերը, թեեւ մեր ժամանակակից ղեկավարի եւ արվեստի այլ ճյուղերի նման ժամանակակից հայ երաժշտությունը նույնպես ոչ միայն ԽՍՀՄ մշակույթի ամենից կարեւոր մասն էր կազմում, այլեւ հայտնի էր որպես «հայ երաժշտական դպրոց»: Այս առումով երիցս գնահատելի է, որ Լորիս Ճգնավորյանի «Աշխարհը եւ մենք» համերգաշարում այդ «մենք»ը հենց հայ կամ Հայաստանի ժամանակակից կոմոդոզիտորներն էին՝ Արամ Խաչատրյանից ու Առնո Բաբաջանյանից մինչեւ Ավետ Տերտերյան ու Ալեքսանդր Հարությունյան...

Բարձր գնահատելով «Աշխարհը եւ մենք» համերգաշարը եւ արժանին մատուցելով նրա ոգեկոչողներին, կատարողներին եւ մանավանդ հովանավորին (հանձին «Պրոմեթեւս»ի) եւ ցանկանալով աղագալում ավելի հարուստ ու բովանդակալից տեսնել այդ համերգաշարը, կուզենայինք նրա ոգեկոչողների ու կատարողների եւ առաջին հերթին Լորիս Ճգնավորյանի ուշադրությունը հրավիրել համերգաշարի անվանման «մենք» բառի կամ հասկացության վրա...

Եթե այդ «մենքը», իսկ դա հիրավի այդպես է, մենք ենք, հայերս, արդա ինչպե՞ս կարելի է անցյալ տասնամյակների սխալները կրկնելով, այդ «մենքը» սահմանափակել միայն Հայաստանի տարածքով: Չէ՞ որ այդ «մենքը» ոչ միայն Հայաստանի հայերն են (որոնք, ցավ ի սիրտ, հայ ժողովրդի մեկ երրորդ մասն են կազմում), այլ ամբողջ հայ ժողովուրդը, նրա ներքին ու արտաքին սփյուռքը, ուստի եւ ոչ միայն անհրաժեշտ, այլեւ դարաշրջանային է այդ «մենք»ի մեջ ընդգրկել սփյուռքի կամ աշխարհի այս կամ այն երկրում աղրող եւ ստեղծագործող լավագույն հայ կոմոդոզիտորների գործերը (կամ գոնե այն կոմոդոզիտորներին, որոնք հայտնի են իրենց սիմֆոնիկ ստեղծագործություններով):

Ներքին սփյուռքը չհաշված, ես նկատի ունեմ Ալան Հովհաննեսին ու Ռիչարդ Յարդջյանին, Վազգեն Մուրադյանին ու Հրանտ Բեգլարյանին (ԱՄՆ), Արա Պարբեյանին, Ռաֆֆի Ուրգանճյանին ու Տիրան (Ժորժ) Կարվարենցին (Ֆրանսիա), Ավետիս Նազարյանին (Իտալիա), Ալիս Թերզյանին (Արգենտինա), Թագուհյանին (Բրազիլիա), Հակոբ Բարոնյանին (Հարավսլավիա), Էմանուել Մելիք-Ասլանյանին (Իրան), Գոհարիկ Ղազարոսյանին (Թուրքիա) եւ շատ ուրիշների (այս ցուցակը կարելի է ճշգրտել ու լրացնել «Սփյուռքի հայ կոմոդոզիտորները» համերգաշարի կազմակերպման ընթացքում):

Քանի որ մենք, հանձին Լորիս Ճգնավորյանի, գործ ունենք ոչ միայն տաղանդավոր դիրիժորի, այլեւ եզակի ու հմուտ կազմակերպիչ-մենեջերի հետ, ապա հուսով եմ, որ իմ այս առաջարկի իրականացումն այնքան էլ չի ձգձգվի, եւ մենք այս տարվա աշնանից կամ եկող տարվա գարնանից սկսած արդեն հնարավորություն կունենանք ունկնդրել «Սփյուռքահայ կոմոդոզիտորներ» համերգաշարի համերգները, որոնք հետագայում ձուլվելով ու միանալով «Աշխարհը եւ մենք» համերգաշարին, կստեղծեն գաղիքի յոթնաղատիկ ավելի հարուստ ու բովանդակալից. այս անգամ արդեն հիրավի «Աշխարհը եւ ՄԵՆՔ» համերգաշարը, որը, հուսով եմ, երկար տարիների բեմական կյանք կունենա: Էլ չեմ ասում այդ եզակի համերգաշարի ձայնագրված եւ աշխարհով մեկ տարածվելիք հոլովակների մասին...:

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

Ներկայացնում է «Հայաստան» հրատարակչությունը

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան. «Ծիսական բառարան»

Ծիսական բառարանը ոչ միայն կրոնական պատասխանատուներին հասուկ եւ հարմար գիտելիքներ է պարունակում, այլեւ բավարարում է հայ հավատացյալների հետաքրքրությունը, որոնք եկեղեցու տոնական օրերի, եկեղեցում գործածվող սպասքի, զարդերի, զգեստների բացատրությունը իրենց անուններով եւ ամփոփ մեկնաբանությամբ, կգտնեն հաջորդ էջերում: Յուրաքանչյուր բացվող էջ նորություն է պարունակում: Վստահ եմ, որ գիրքը լավագույն ծեւով կծառայի իր նպատակին, հետաքրքրությամբ կկարդացվի եւ ընթերցելուց հետո հայ հավատացյալները հստակ եւ որոշակի գաղափար կունենան Հայոց եկեղեցու ծիսագիտության մասին:

Բառարանն ըստ բաժինների եւ այբբենական կարգով ընդգրկում է Հայոց եկեղեցու տոները, ծեսերը, դրանց առընչվող առարկաները ու արարողակարգը, ինչպես նաեւ եկեղեցականների աստիճանակարգը:

Բառարանում հնարավորին չափ արտացոլված են եկեղեցական ծեսերի պատմական ակունքները, ծիսական առարկաների երբեմնի կիրառությունը, զուգահեռներ են տարված Քրիստոնյա այլ ժողովուրդների հույների, հռոմեացիների եւ Հայոց եկեղեցու ծիսական արարողությունների միջեւ: Ուստի այն հատկապես հայ ժողովրդի համար ունի ճանաչողական բացառիկ նշանակություն:

Որոշ բառերի ու արտահայտությունների ուղղագրության հարցում պահպանվել է բնագիր ձեւը:

Այս բառարանը բնակչության բոլոր խավերի համար կարող է ծառայել իբրեւ յուրօրինակ ձեռնարկ: Անհատները, գրավաճառները, գրադարանները եւ ցանկացած հիմնարկություն այն կարող են ձեռք բերել «Հայաստան» հրատարակչությունից (հասցեն՝ Երեւան, Իսահակյան 28) եւ թիվ 4 գրախանութից (հասցեն՝ Երեւան, Կիեւյան 17):

Ստորեւ ներկայացնում ենք բառարանում տեղ գտած մի քանի տերմիններ:

Այլակերպություն - Հայ եկեղեցու հինգ գլխավոր տոներից մեկն է, որ կոչվում է նաեւ Պայծառակերպություն Քրիստոսի պայծառ ու լուսավոր երեւալուց, եւ Վարդավառ՝ հին հեթանոսական տոնի անունից: Տոնված տնօրինությունն է Քրիստոսի փառավոր ու լուսավոր կերպարանքով երեւալը իր առաքյալներից երեքի՝ Պետրոսի, Հովհաննեսի եւ Հակոբոսի հետ Գալիլիա սուրբ լեռան վրա, որը, ըստ հավատի ավանդության, Թաբոր կոչված լեռն է եղել: Տնօրինությունը պատմում են Մատթեոս, Մարկոս եւ Ղուկաս ավետարանիչները, թեեւ լեռան անունը չեն տալիս: Տոնը նշվում է Զատկի ԺԴ կիրակի, այսինքն՝ Զատկիս 98 օր հետո, հետեւաբար 35 օրվա շարժականություն կարող է ունենալ հունիսի 28-ից մինչեւ օգոստոսի 1-ը: Տոնախմբությունը երեք օր է: Կիրակի օրը բուն տոնն է: Բ՝ դարձյալ հրամայված տոն ու մեռելոց է եւ Գ՝ լուր տերունի: Հույներն ու լատինացիները Այլակերպության տոնը նշում են սույն օգոստոսի 6-ին: Այս տոնը հավանաբար սկիզբ է առել Թարգմանչաց դարից եւ առաջին օրվա շարականը վերագրվում է Ներսես դահապետ Մովսես Խորենացուն, իսկ մնացածը՝ եղիշեին: Բ. եւ Գ. տոները Շնորհալու ժամանակ են ավելացել եւ նույն ժամանակ էլ շարականն է գրվել:

Անվանակոչություն - Քրիստոսի անվան, այսինքն՝ Հիսուս անունը դնելու հիշատակությունն է: Հիսուս նշանակում է Փրկիչ, ինչպես հրամայված էր կոչել հրեշտակին Մարիամի Ավետման պահից (Ղուկ. Ա 31) եւ ինչպես իրոք գրվեց ծնվելու Ը օրը թլփատության արարողության առթիվ (Ղուկ. Բ 21), հրեական օրենքի համաձայն: Անվանակոչությունը Տոնացույցի մեջ իբրեւ առանձին տոն նշանակված չէ, այլ նոր օրացույցերը սովորույթ դարձրին այդպես նշանակել ծննդյան Ը օրը, հունվարի 13-ը, փոփոխելով տոնացույցի մեջ նշանակված թլփատության տոնը: Հիսուս անունը սովորաբար գործածված է Ավետարանի մեջ, բայց այժմ ավելի գործածական է Քրիստոս անունը, որը նշանակում է Մեսիա-Օծեալ: Ավետարանի մեջ հետեւելով Եսայու մարգարեությանը (Եսայի, է 14) Քրիստոսին տրված է նաեւ Էմանուել անունը (Մատթ. Ա 23): ■

ՉԱՆԱՉԱՆՔ ՉԱՆԱՉԱՆՔ ՉԱՆԱՉԱՆՔ ՉԱՆԱՉԱՆՔ ՉԱՆԱՉԱՆՔ ՉԱՆԱՉԱՆՔ

Երկար դարեր քեզ, փարավոն

Ռամզես 2-րդ փարավոնի մումիան «ողջ եւ առողջ է», նրա վիճակն անհանգստություն չի պատճառում

Այսպիսի եզրակացության եկան Եգիպտացի եւ Ֆրանսիացի մասնագետները, երբ օրերս, 15 տարվա ընդմիջումից հետո, բացեցին այն մեկուսարանը, որտեղ պահվում էր այդ պատմական մասունքը:

1976 թվականի սեպտեմբերին եգիպտական մեծ փարավոնի մումիան, որը իշխում էր 70 տարի եւ մահացել էր 91 տարեկան հասակում, ուղարկվեց Փարիզ՝ «բուժման»: Բանն այն է, որ այն ժամանակ մումիայի հյուսվածքներում գիտնականները հայտնաբերեցին բազմաթիվ սնկեր եւ մանրէներ, որոնք վերջին վերջո կարող էին քայքայել նրան: Այն ժամանակ փորձագետների կարծիքները փարավոնի աճյունի «բուժման» վերաբերյալ չհամընկան: Եւ վերջապես նրանք ընտրեցին գամա-ճառագայթման ճանապարհը, որը մահացու էր ամենամանր միկրոօրգանիզմների համար:

Երբ մի տարի անց Ռամզես 2-րդը վերադարձավ Կահիրե, գիտնականները որոշեցին, որ «բուժման» արդյունքներին պետք է սպասել 10 տարի: Ընդ որում, այդ ժամկետի ընթացքում մումիան պետք է գտնվեր անթափանց, մանրադեռ աղակե պահարանում: Սակայն անցավ ոչ թե 10, այլ ամբողջ 15 տարի, մինչեւ որ գիտնականներին թույլատրվեց բացել բաղձալի արկղը, որը պահվում էր Կահիրեի ազգային թանգարանում: Այդ ժամանակ ավելի բարձր էին հնչում կասկածամիտների ձայները, որոնք պնդում էին, թե գամա-ճառագայթումը վնասել է մումիային եւ նույնիսկ իր փոխվել է նրա գույնը: Որոշում ընդունվեց հավաքել մի խումբ միջազգային փորձագետների: Եւ ահա օրերս Ֆրանսիայից եգիպտոս մեկնեցին երեք գիտնականներ, որոնք 15 տարի առաջ մասնակցել էին փարավոնի «բուժմանը»: Եգիպտական մի խումբ մասնագետների հետ միասին նրանք բացեցին մեկուսարանը: Կոնսիլիումի ընդհանուր կարծիքն արտահայտեց Փարիզից մի մասնագետ՝ Ժակ Ռիշարը, որը մումիան հետազոտելուց հետո հայտարարեց. «Այն հոյակապ վիճակում է»: «1977-ի թվականի ապրիլից փարավոնի գլխից ոչ մի մազ չի ընկել», իր Ֆրանսիական գործընկերոջ կարծիքը հաստատեց Կահիրեի ազգային թանգարանի մումիաների բաժնի վարիչ Նասր Իսկանդերը: Մնում է գիտնականներին ցանկանալ, որ նրանց փորձը կրկնապատկի եգիպտոսի մեծ փարավոնի «կյանքը», որն արդեն 3 հազար տարուց ավելի է: ■

Հնարավո՞ր է, որ մազերը ներկելը հանգեցնի քաղցկեղի: Փորձաքննությունները հաստատել են կենդանական կարցինոգենների առկայությունը մազեր գունավորող տարբեր խառնուրդներում, իսկ որոշ ուսումնասիրություններ պարզել, որ արյան քաղցկեղով հիվանդանալու հավանականությունը մեծ է գեղահարդարանի եւ ներկանյութեր օգտագործողների շրջանում: Անցյալ շաբաթ հայտնաբերվել է եւս մեկ անհանգստացնող նորություն: Ըստ ամերիկյան «Հասարակական առողջապահություն» ամսագրի, Քաղցկեղի միջազգային ինստիտուտի գիտնականները գտնում են, որ մազերը ներկող կանանց շրջանում 50 տոկոսով մեծանում՝ է քաղցկեղի առաջացման հավանականությունը:

Այդ երեւույթը հաստատելու համար էպիդեմիոլոգ Շեյլա Ջեմը եւ նրա գործընկերները հարցում են արել Նեբրասկա նահանգի 1400 բնակիչների եւ պարզել, որ Հոջկինի ուռուցքով տառապող կանանց թիվը 1,5 անգամ ավել է մազի ներկեր օգտագործողների մոտ:

Այն կանայք, ովքեր երկար ժամանակ ներկեր են օգտագործում, ունեն հիվանդության ամենաբարձր հավանականությունը, եւ հիվանդությունները շատ ավելի հաճախ են այն դեպքերում, երբ օգտագործվում են գունավորող ներկեր: Մինչդեռ լվացող ներկեր օգտագործողների շրջանում ուռուցքի առաջացման հավանականությունը անհամեմատ փոքր է: Հետազոտությունների համաձայն, մուգ ներկերն ավելի վտանգավոր են, քան բաց ներկերը: Դեռեւս ուսումնասիրված չեն մազերի գույնը բացող, բայց գունավորումից զուրկ ներկերի ներգործության հետեւանքները մարդու օրգանիզմի վրա:

Նոր հետազոտությունները դեռեւս բավական հիմնավորված չեն, եւ Ջեմը անկեղծորեն ընդունեց, որ վիճակագրական տվյալները զուցե չեն արտացոլում պատճառա-հետեւանքային կապը: Որոշ էպիդեմիոլոգներ լուրջ կասկածներ են արտահայտում այս վարկածների վերաբերյալ: Իսկ գեղահարդարման Ֆիրմաները հավատիացնում են, թե անհանգստանալու կարիք չկա. «մազերի ներկերը միանգամայն անվնաս են եւ խորհուրդ են տրվում գիտնականների լայն շրջանի կողմից»:

Այնուամենայնիվ, ամերիկացի կանանց 20-40 տոկոսն օգտագործում է մազերը գունավորող խառնուրդներ, իսկ քաղցկեղի ուռուցքը տարածված է այն ազգերի մոտ, ուր արագ է զարգանում չարորակությունը:

Լիանա Հաջիկյան

Ըստ Newsweek-ի, հուլիս 13, 1992

Հեռավոր Լոս Անջելեսում լույս տեսավ «Շրջադաս» պատկերազարդ ամսագիրը

Գրեթե շնչեցուցիչ հարվածի նման էր, երբ խմբագրության սեղանին դրեցին ամսագրի թարմ համարը: Առաջին տպավորությունը համարձակությունն էր, լայնածիր Ռուսաստաններում-բանում թափառելու սովոր հայի թափը, որ չհնացած թե վաղն ինչ է լինելու, այսօր թեւերը հնչում ու գործի է կոչում: Ավելի ուշադիր նայելուց շատ բաներ են երեւում, կարոտ համուհոտի, ձայնի, շրջադասի, ինքնադահիրանման բնագդ, հայի հոգու փնտրտուք: Ամսագիրն ստեղծողները, որ ընդամենը մի քանի տարի է, ինչ հայտնվել են նոր աշխարհում, տեսնող աչք ունեն, փնտրող միտք, ամեն ինչ սեփական ձեռքերով ստեղծելու հատկություն: Թովմաս Տեր-Հովսեփյանը, որ խմբագիրն է, եւ Սամվել Սեւադան՝ նկարիչը, ինչպես նաեւ նրանց ընկերները, հնում, ծրագրեր կազմում: Ամերիկան նրանց կուլ չի տվել եւ, երեւում է, չի էլ կարողանալու, կամ նրանք ստեղծելու են իրենց Ամերիկան, Հայաստանի խանձված ու մշտակա հայրենիքի կնիքը վրան:

Հայաստանից նոր գնացած, լեզու ու սովորույթ չիմացող, պետության հաշվին աղրող խեղճուկրակ հայը, որ իր աղտոտիկ կացարանում նստած սպասում է, թե վաղն Ամերիկան ինչ հրաշքներ ու հարվածներ է թափելու իր գլխին, չի կարող այսպիսի ամսագիր ստեղծել: Սա ուժեղ, ինքնագիտակից, ինքնահաստատ ու նախաձեռնող հայի գործ է:

Այսպիսի հայերն իրար պետք են, որտեղ էլ լինեն, նրանք պիտի պահեն միմյանց. նեցուկ լինեն նոր ոտքի կանգնողին: Ահա այսպիսի կոչով էլ դիմում են Հայաստանի ստեղծագործողներին, գրողներին, նկարիչ-ծաղրանկարիչներին, պարզապես ասելիք ունեցող մարդկանց բդեսկցեք եւ պահեք «Շրջադաս»: Այն մերն է՝ հայերինս...

«Շրջադաս», հուլիս 1992, արվեստագետների զվարճալի հանդես:

Թովմաս Տեր-Հովսեփյան՝ գլխավոր խմբագիր, Սամվել Սեւադա՝ գեղարվեստական խմբագիր

48 էջ, գունավոր, բարձրորակ պատկերներով:

Երեւանում դիմել Համլետ Գասպարյանին, հեռ. 58-18-41, միայր Հովսեփյանին, հեռ. 53-84-47: ■

digitised by A.R.A.R.@

Թուրքական ջրաէլեկտրակայանի բացումը Եփրատի վրա

Երեքշաբթի, հուլիսի 25-ին Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը կատարեց Բոզովայի մոտ գտնվող Եփրատի ջրամբարակի բացումը, ամրակնդելով երջանի կարեւորագույն ջրային ռեսուրսների վրա իր մենաշնորհությունը:

Սիրիական սահմանից մոտ 70 կմ հեռավորության վրա գտնվող ջրամբարակի վրա կառուցված, յուրաքանչյուրը 300 մեգավատ հզորությամբ տուրբիններից երկուսը գործի դրվեցին: Մյուսները կգործարկվեն առաջիկա տարի. 8,9 միլիարդ կիլովատ ժամ հզորությամբ: Ջրաէլեկտրակայանի ամբողջական ծախսը գնահատվում է 3,5 միլիարդ դոլար:

Բացման հանդիսության մասնակիցների թվում էր նաեւ հայկական ոլորտիրակությունը Էներգետիկայի նախարար Սեդրի Թաշճյանի գլխավորությամբ, խորհրդական Ռուբեն Սաֆրազյանի եւ արտգործնախարարության Թուրքիայի բաժնի վարիչ Մուրադ Բոջոլյանի ընկերակցությամբ: Հայկական ոլորտիրակությունը Ստամբուլ էր ժամանել հուլիսի 24-ին եւ այնտեղից մեկնել Ուրֆա:

Ջրի կարիք ունեցող հարեւան երկրները, հատկապես Սիրիան եւ Իրաքը, խիստ մտահոգված են Թուրքիայի փառասիրական, «Հարավ-արեւելյան Անատոլիայի նախագիծ» կոչվող ծրագրով, որի մի մասն է նորաբաց «Աթաթուրք» ջրամբարը, որն առավել եւս կկրճատի Սիրիայի եւ Իրաքի ջրային ոլորտները:

Բացման իր ճառի մեջ վարչապետ Դեմիրելն անդրադարձավ այդ հարցին, հայտարարելով, թե դա «գերիշխանության հարց է, եւ Թուրքիան իրավունք ունի անել այն, ինչ ուզենա»: «Ջրային ռեսուրսները պատկանում են Թուրքիային, իսկ նավթը նրանց: Չէ՞ որ նրանց չենք առնում մենք իրավունք ունենք ձեր նավթի կեսի նկատմամբ, այն մեզ տվեք: Հետեւաբար, նրանք էլ չեն կարող պահանջներ ներկայացնել մեզ պատկանելիքի նկատմամբ: Սահմաններ անցնող այս գծերը մերն են մինչեւ սահմանն անցնելու վերջին կետը», հայտարարեց նա: ■

Ադրբեջանի պաշտ. նախարարի հրաժարականը չընդունվեց

Ադրբեջանի պաշտպանության նախարար Ռահիմ Ղազիեւը երեքշաբթի օրը հրաժարական տվեց: Ելույթ ունենալով հանրապետության մեջլիսում, նա բողոքեց, որ այլեւս չի կարող Ադրբեջանի նախագահ Աբդուլֆազ Էլչիբեյի խմբի հետ աշխատել: Պաշտպանության նախարարը դժգոհություն արտահայտեց մասնավորապես Ռովշան Ալիեւին վերջերս հանրապետության գլխավորական դատախազ նշանակելու կապակցությամբ: Ղազիեւի կարծիքով, գլխավորական դատախազի թեկնածությունը պետք է համաձայնեցվեր իր հետ:

Պատգամավորները չհամաձայնեցին նախարարի հետ: Ադրբեջանի խորհրդարանը շաբաթի օրը չընդունեց Ղազիեւի հրաժարականը:

Հիշեցնենք, որ Ղազիեւն իր ելույթներում բազմիցս հայտարարել էր, որ եթե իր զորքերը պարտություն կրեն Ղարաբաղում, ապա ինքը կդիմի ինքնասպանության: Սակայն նախարարը բավարարվեց հրաժարականով, որն էլ չընդունվեց: ■

Հայկական օդագնացության ներկայացուցիչները բանակցում են Վաշինգտոնում

Երեքշաբթի տեւած խորհրդատվական բնույթի զրույցներից հետո հուլիսի 26-ին Վաշինգտոնում սկսվեցին բանակցությունները հայկական օդագնացության ներկայացուցիչների եւ Մ. Նահանգների տրանսպորտի բաժանմունքի պաշտոնատար անձանց միջեւ, նախաձեռնությամբ «Լեռն Էմպրես» եւ «Լեվոն թրավել» ընկերությունների նախագահ Կարոլիս Թիթիզյանի եւ կարեւոր միջամտությամբ Հայաստանում Մ. Նահանգների դեսպանության գործավար Թոմ Պրայսի:

Մինչեւ հուլիսի 31-ը տարունակվող բանակցություններին հայկական կողմից մասնակցում են Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Շամամյանը, Հայկական օդագնացության տնօրեն Դմիտրի Աբրաբյանը եւ միջազգային օդագնացության բաժնի վարիչի օգնական Վլադիմիր Քոչարյանը, ինչպես նաեւ Կ. Թիթիզյանը:

Բանակցությունների նպատակն է միջազգային ասպարեզում հիմնել Հայկական օդագնացության գործունեություն, բանակցել կանոնների եւ հարկերի շուրջ եւ միջոցներ ստեղծել մաս կազմելու միջազգային համաթռչնային կազմակերպություններին: ■

Ռուսաստանը թույլատրել է գինամթերքների արտադրության արտոնագրերի վաճառք

Ռուսաստանի կառավարությունը «Բազալտ» պետական գիտարտադրական ձեռնարկությանը թույլ է տվել արտասահմանյան պատվիրատուներին վաճառել «Know-how» եւ գինամթերքների արտադրության արտոնագրեր: Համաձայն կառավարության որոշման, որը ստորագրել է փոխվարչապետ Գեորգի Խիժան, ձեռնարկությունն իրավունք ունի արտասահմանյան պատվիրատուներին տրամադրել իր արտադրած գինամթերքը 1992 թ. սկսած Ռուսաստանի արտաքին տնտեսական կապերի նախարարության միջնորդությամբ: Կառավարությունը ձեռնարկությանը թույլատրել է նաեւ աշխատանքներ տանել գինամթերքների նոր տեսակների ստեղծման ուղղությամբ (արտասահմանյան հաճախորդների հաշվին) հաշվի առնելով Ռուսաստանի պաշտպանության նախարարության շահերը, ինչպես նաեւ կոնսուլտացիաներ անցկացնել արտասահմանյան մասնագետների համար եւ ցուցադրել նրանց գինամթերքների նմուշները: ■

Դատավարությունը վերջացավ Լորիս Ճգնավորյանի հաղթանակով

Ամեն ինչ սկսվեց այն օրվանից, երբ «Էպոխա» թերթն այս տարվա 10-րդ համարում տպագրեց Թամար Հովհաննիսյանի «Լուրջ երաժշտության եւ բարոյականության դեֆիցիտի մասին» հոդվածը, ուր հեղինակը, ըստ հայցվոր Լ. Ճգնավորյանի, վերջինիս մեղադրել է աշխարհի երեսին եղած ու չեղած 12 մեղքերի մեջ: Մանաւորն էլ գտնելով, որ դա ոչ միայն անձնական վիրավորանք է, այլեւ Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի անվան ուղղակի դախարակում, եւ թերթին, եւ հոդվածագրին դատի տվեց:

Երկար ու ձիգ դատական ընթացքից հետո, որի ժամանակ բացարձակապես ժխտվեցին տիկ. Հովհաննիսյանի հերյուրանքները, երեկ Երեւանի Շահումյանի ժողդատարանն իր դռնբաց նիստում որոշեց, որ հոդվածում տպագրված փաստերը զուրկ են հիմքերից, հոդվածագիր Թամար Հովհաննիսյանի եւ «Էպոխա» թերթի կողմից ոչ մի աղացույց չներկայացվեց: Ուստի, ժողդատարանը դահանջեց դատական կարգով հերքում տպագրել:

1945 թ. Ճապոնիայի վրա ընկել է երեք ատոմային ռումբ, որոնցից մեկը հայտնվել է Խորհրդային Միության ձեռքերում

Համաձայն մոսկովյան «Սովետսկոյե սեկրետնո» թերթի, 1945 թ. օգոստոսին ամերիկացիները Ճապոնիայի վրա գցել են ոչ թե երկու, այլ երեք ատոմային ռումբ: Երորդն ինչ-ինչ պատճառներով չի դայթել եւ ճապոնական կայսերական զորակայանի ներկայացուցչի միջոցով տրվել է խորհրդային հետախուզության գեներալին: Այդպիսի եզրակացություն է անում թերթը, ելնելով իրեն հայտնի դարձած փաստաթղթից, որը հասցեագրված է Խորհրդային բանակի գլխավոր հետախուզական վարչության այն ժամանակվա պետ, գեներալ Պ. Իվաշուտինին:

Համաձայն թերթի պնդումների, որը մասնագիտացած է լրագրական հետաքննություններ անցկացման եւ սենսացիոն նյութերի հրապարակման մեջ, ճապոնական զորակայանի ներկայացուցիչն արդարացնում է Ճապոնիայի այդ քայլը նրանով, որ չի ցանկացել թույլ տալ Ամերիկային ատոմային զենքի մոնոպոլ տիրապետում: Հակառակ դեպքում, ինչպես հայտնել է ճապոնական ներկայացուցիչը, «մենք կորած էինք Ամերիկան մեզ ծնկի կբերեր, կվերածեր գաղութի եւ մենք երբեք չէինք կարողանա ոտքի կանգնել: Իսկ եթե ատոմային ռումբ ունենային եւ ԱՄՆ-ը եւ ԽՍՀՄ-ը, ապա մենք հավասարած էինք, որ ոչ հեռու ապագայում Ճապոնիան նորից կբարձրանար եւ կգրավեր իր արժանի տեղը հզոր պետությունների շարքում»:

«Ինտերֆաքս» գործակալությունը դիմել է Ռուսաստանի ռազմական ուժերի գլխավոր շտաբի արխիվների վարչությանը խնդրելով մեկնաբանել այդ հաղորդումը: Արխիվների վարչության նախագահը հայտարարել է, թե ինքը չի կարող ոչ հաստատել, ոչ էլ ժխտել Ճապոնիայի կողմից Խ. Միությանը ատոմային ռումբ տրամադրելու փաստը, քանի որ այդ բնաբան դեռեւս պատկանում է «պետական գաղտնիների կարգին»: ■

Լուրեր Ռադիո

Անընդունելի պատժամիջոցներ

Մարդու իրավունքների պաշտպան միջազգային կազմակերպություններից մեկը Middle East Watch Group-ը, կիրակի օրը մի ուսումնասիրություն հրապարակեց այն մասին, թե եգիպտական ոստիկանությունը խաղաղական եւ ոչ խաղաղական բանտարկյալների նկատմամբ անընդունելի պատժամիջոցներ է կիրառում: Համաձայն այդ ուսումնասիրության, բացի նախաքննությունների անարդարացի ձգձգումներից, բանտարկյալները ենթարկվում են էլեկտրական հոսանքով տանջանքների, բռնաբարությունների եւ այլն: Կազմակերպությունը եգիպտական իշխանություններից պահանջեց ամենակարճ ժամկետում հրապարակել կալանավորների ցուցակները, նրանց գտնված վայրի, կատարած հանցագործությունների մասին ստույգ տվյալներ: ■

Մոլդովա. գազ Իրանից

«Մոլդովան պատրաստ է Իրանից նավթ եւ գազ գնել», հայտարարեց Մոլդովայի նախագահ Միրչա Սնեգուրը: Երեքշաբթի օրը Քիշնեւում նա ընդունեց Մոլդովայում Իրանի դեսպանի (որը միաժամանակ Իրանի դեսպանն է Ռումինիայում) հավատարմագիրը: Մ. Սնեգուրը հույս հայտնեց, որ Մոլդովայում խաղաղություն կհաստատվի «եւ դրանով հանդերձ հուսալի երաշխիքներ կստեղծվեն արտասահմանյան ներդրումների համար»: ■

Հայ Առաքելական Եկեղեցի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի Հայրապետական օրհնությամբ Արարատյան թեմը սույն թվականի օգոստոսի 2-ին խաղաղամայր Երեւանի Ազատության հրապարակում կազմակերպում է եկեղեցական արարողություն վասն կենաց Արցախ աշխարհի հերոս ազատամարտիկների ու Հայաստանի սահմանների խաղ պաշտպանների եւ հոգեհանգստյան պաշտոն վասն ազատագրական պայքարի սուրբ նահատակաց ու անմեղ զոհից:

Առաքելական Մայր եկեղեցու հոգեվորականաց հետ արարողությանն իրենց մասնակցությունը կբերեն նաեւ Կանադայի Հայոց Թեմի առաջնորդ Տ. Հոհան Եպիսկոպոս Տերտերյանը, հոգեւոր սպասավորներ Միացյալ Նահանգների Արեւելյան, Արեւմտյան եւ Կանադայի հայոց թեմերից:

Հրավիրում ենք մարտիրոս եւ նահատակ ազատամարտիկների հարազատներին ու մեր ողջ հավատացյալ ժողովրդին համատեղ աղոթքով խնկարկել հիշատակը զոհված հայորդիների եւ հայցել Ամենակալն Աստծուց ողջություն եւ արեւշատություն Հայոց աշխարհին ու նրա մարտնչող զավակներին:

Արարողության սկիզբը ժամը 19-ին:

Արարատյան Հայրապետական Թեմի Առաջնորդարան

Լուրերը interfax-ի, «Սնարի» եւ մեր թղթակիցների

Ազգ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխաւոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ

Խմբագիր ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Տնօրէն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

☎ 52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրէն

Apple Macintosh համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Azg Bi-daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

Editor H. AVEDIKIAN

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23, Արշակունեաց 2

Գրանցման թիւ 65
Տպաքանակ 20 000
Ստորագրուած է տպագրութեան 29.07.1992
Դասիչ 69149
Պատուէր 1519

digitised by A.R.A.R.@